



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1906

~~081 - 29/11/76~~
~~081 - 14/1/78~~
~~0272 - 20/1/78~~
~~0266 - 25/11/78~~

0284 - 29/10/78
0253 - 29/1/78
268 - 19/11/78

U.S.

210

ԿՈՂՑՈՎ * * *

ՆԵԿՐԱԾՈՎ * *

ՆԻԿԻՑԻԵ *

ՊԼԵՇԶԵՎ *

25 SEP 2006

891.71-1

8-30

вр.

29.9.22

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԶԱՏՈՒՐԵԱՆ

ՌՈՒՍ ԲԱՆԱՍՏԵՂՆԵՐ

ԲԱՆԱՍՏԵՂՆԵՐԻ ՊԱՑԿԵՐՆԵՐՈՎ

ԵՐԿՐՈՐԴ ԳՐ-ԳՈՅՆ

Հրատարակեցին

Գլ. Խ. Ե. ՀԱՐՄԱՆԻԱՆ

Տպարան - Բ. ԲԱՐԻ-ՊԵՏՐԵԱՆ
Մոսկվա - 1906.

Тип. Х. Бархударянцъ. Москва, Мясной пер., д. Бѣляева.

1001
4868



14 MAY 2015


11628

ԱԼԵՔՍԻՑ ՎԱՅԻԼԵՎԻԶ ԿՈՂՑՈՎ

(Ծնառ 3 հոկտեմբերի 1809 թ. վախճ. 29 հոկտ. 1842 թ.)



25 NOV 2010



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԻՒԹԻՒՆՆԵՐ ԿՈԼ'ՑՈՎԻ

Հողմ է փըշում, հողմն—օրօրում
Դաշտում խոտ, դալար.
Թող է բերում, թողով ծածկում
Իմ ողջ ձանապարհ:

Դռւրս ել այ թուխապ, անցի՛ր աշեղ
Երկնի կամարով.
Գոռա՛, զոչի՛ր, լոյս-աշխարհ՛ը
Ծածկի՛ր խաւարով:

Կըտրի՛ք տըղի սիրտն է անվախ—
Բըլքուլ կը կըտրի.
Նա իր բախտը—առանց ձամբի,
Անլոյս—կը դանի:

Ի՞նչ բան է հողմ՝ մըթին ձամբայ,
Կամ թուխպ ու կայծակ,
Երբ որ սըրտում կրակ են զցել
Աչեր կապուտակ:

Դարդըս որն է: Այս աշխարհում
Դարդ ու ցաւ չըկան,
Երբ սիրում է կրտիճ տըղին
Ջահել սիրական:

Շինականի ՄՏԱԾՄՈՒՆՔԸ

Խըրճիթ եմ քաշվում
Ու միտք եմ անում,
Թէ ոնց մեն - մենակ
Ապրեմ աշխարհում:

Ջահել ջիւան եմ,
Ջահել կին չունեմ,
Ճալալ մի սէրով
Ընկեր էլ չունեմ:

Չունեմ տաք անկիւն,
Չունեմ գանձ, ոսկի,
Ոչ արօր - տափան,
Ոչ բանուկ մի ձի...

Աղքատ կեանքի հետ՝
Հերլս ինձ տուաւ
Մենակ մի պարզե—
Երկաթի պէս ուժ:

Բայց էն էլ կարիքն
Հալ ու մաշ արաւ
Օտարի շեմքում;
Օտարի դըռան:

Խըրճիթ եմ քաշվում
Ու միտք եմ անում,
Թէ ո՞նց մեն - մենակ
Ապրեմ աշխարհում...

ԾԵՐՈՒԿԻ ԵՐԳԸ

Կառնեմ, կըթամբեմ
Նըժոյգն իմ վազուկ.
Թեթև կըթըռչեմ,
Բաղէից թեթև:

Կանցնեմ ծով ցամաք,
Հեռու աշխարհներ,
Ու յետ կըթերեմ
Իմ ջահել օրեր:

Կոկուած զուրս կըգամ՝
Կըտրիճ առաջուան.
Նորից զուր կըգամ
Սիրուն աղջըկան:

Բայց, ախ, ո՞նց հասնես
Անցածի ետքից.
Արև չե ծագում
Մայր մըտած տեղեց:

Ե Ր Գ

Մարդու չեմ ասի,
Ի՞նչի գարունքին
Ծաղիկ չեմ քաղում,
Մար ու ձոր ընկած:

| Զորցան ծաղիկներ,
Անցաւ էն գարուն,
Երբ մենք միատեղ
Փունջ էինք կապում:

Անցան էն օրեր,
Ասես նետ արագ,
Երբ մեր սըրտերում
Սէր կար ու կըրակ:

Անցաւ ամեն բան,
Ել ոնց յետ բերեմ,
Ի՞նչ սըրտով մենակ
Ես ծաղեկ քաղեմ:

Մարդու չեմ ասի,
Ի՞նչի եմ տըրտում,
Ի՞նչ ցաւ ու դարդ կայ
Թաղուած իմ սըրտում...

Խեղձի Վիշակ

(աջամ թարգմանութեան)

Դառն է օտարի
Թէ՛ ձերմակ հայը,
Թէ՛ օտար սուփրից
Կերած - խըմածը:

Լեզուդ է կապվում
Օտար յարկի տակ,
Անզէն է սպանվում
Քո ամեն փափադ...

Թէ սիրալդ մի օր
Խընդում է, բացփում
Իսկզին չար ծաղրի
Թղնով է լըցվում:

100-
868
5



Քո պարդ, լցու-օրին
Պատում է խաւար.
Դարդից սկանում
Քո աչքին աշխարհ:

Ու նըստած՝ նայում,
Նայում ես, խընդում:
Բայց սև վիճակու ես
Անիծում սըրտում...

Ե Ր Գ

ԱՌԻ, լոնչի գօրով
Ինձ մարդի տուին,
Իմ չը սիրածին,
Ծիրացած մարդին:

Լամ է, որ, այ մէր,
Սըրբում ես Հիմի
Աչքիս արտասունք,
Աղե՛ արտասունք:

Լամ է, որ, այ հէր,
Նայում ես Հիմի
Իմ սև ապրուստին,
Խըզալի՛ կեանքին:

Զէ՞ որ ձեր սիրտը
երվում է, լալիս,
Երբ տօնին մենակ
Ձեր տունն եմ գալիս:

Ու ձեզ իմ տընից
Պարզե եմ բերում—
Ու ամպ—երեսիս,
Ու դարզը—սրբում:

Ուշ է, այ ծնողներ,
Բախտին մեղ զընէք,
Գըրբացին ձէն տաք
Լցո - օր խոստանաք:

Թող հեռու ծովից
Նաւեր գան բարձած,
Ոտիս տակ փըռուեն
Ոսկի՛ ու արծաթ:

Ա. Հովհանքից յեաց
Խոստ չե կանաչում:
Ջըմեռուայ ցըրտին
Ծաղիկ չե ծաղկում:

ՎԵՐՁԻՆ ԿՈՒԻ

Գըլիսիս վերև փոթորիկ էր մըւնչում,
Որոտում էր երկինքն ամպոտ ու մըթին.
Իմ թշլ միաքը ձակատագրից երկնչում,
Պաղ ու սառսուռ կաշկանդում էր իմ հոգին:

Բայց ես չընկայ: Ինձ չըյաղթեց տառապանք,
Տարայ հարուածն խիզախ հոգով աներկուն.
Եւ պահեցի որոտումն փափագ ու տենչանք,
Մարմնիս մէջ ոյժ, հոգոյս խորքում՝ ջերմութիւն:

Պիտի փրկուեմ թէ պիտ կորչեմ կըուուելուց,
Ողջը մէկ է—ինչ էլ լինի վիճակուած.
Նախախնամող Արարշին եմ ես վաղուց
Ապաւինել—Նորա կամքին յոյս դրած:

Եւ իմ հաւատոն աներկբայ է ու անշէջ—
Նըրանով է բոլոր կեանքը միշտ լեցուն.
Անվակիձան է ամեն ձըգառում նրա մէջ.
Նրա մէջ է հանգիստ անյոյզ և անհուն:

Եւ դու զօւր ես աղէտներով ինձ սպառնում,
Զօւր ես դու ինձ կըռուի կոչում, այ վիճակ.
Միշտ պատրաստեմ քեզ հետքոնուել ես կըռվում,
Երբէք ինձնից դու չես խըլիլ յաղթանակ:

Հոգուս խորքում ես ոյժ ունեմ անսասան,
Սըրտիս խորքում—արեան բորբոք ու կըրտկ.
Խաչիս ներքոյ—հանգստեանս է օթեան,
Խաչիս վըրայ—իմ սէրը սուրբ, անսպակ:

Խ Ա Հ Ե Պ

1.

ՄԱՐԴ

Ո՞քան թովիչ է Աստծոյ աշխարհում
Ամեն արարած—ո՞քան գեղանի.
Բայց մարդ-էակից չըկայ գեղանին,
Ոչ մի բան նրա թովչանքը չունի:

Մերթ նա բռուն ու խոր ատում է իրան,
Մերթ նա իս անձին ընծայում զըդուանկը.
Մերթ նա սիրում է, մերթ հիասթափվում;
Վայրկեան ապրելու—դողդողում ողջ կեանք...

Երբ սանձ չի գնում նա իր կըսքերին,
Նա յագեցնում է երկիրն արիւնով.
Երբ նա չի զըսպում իր կամքը մոլի,
Նըրա տակ եռում, փոթորկվում է ծով:

Բայց կանցնեն մի օր այդ մութ հակումեր,
Լուսով կըշողան խել ու միտ մարդկան.
Եւ երկրիս վըրայ իր գեղեցկութեամբ
Կը նըսկմացնէ մարդըս ամե՛ն բան:

ԿԵԱՆՔ

Հեշտ է մեղ խելքով աշխարհն ընդդրսկել
Ուր միտքն է ազատ թըռչում, սաւառնում:
Խնչն մեր միտքը չէ կարող հասնել,
Մենք այն էլ կարծես, լաւ ենք ըմբռնում:

Դատում ենք խըստիւ, ամեն ինչ հաշվում,
Չը բացած սակայն ծածկոցն զարերի.
Այնտեղ է հասել որ չենք էլ քաշվում
Խրոխտալով մեխել զաղանիքն աշխարհի:

Գյուղեան օրից մենք մինչև հիմայ
Ի՞նչեր չենք տեսել՝ եկած ու անցած—
Ախտերի՛ ձընջում մեր կեանքի վըրայ,
Ազգեր զօրացած, ազգեր տապալուած:

Ապրելով մենք միշտ խորն ենք թափանցել
Բընութեան խորշերու եւ մեր զիտցածից
Շատ բան զիւրի՛ն է մեր միտքը անցել
Շատն էլ քաղել ենք մենք յամառ կըռուեց:

Եւ որքան քիչ ենք մենք առաջդիմած...
Ի՞նչ կար խոր հընում—զեռ մութ մեղ համար,
Ի՞նչ է մեր գալիքն—այդ էլ քօղարկուած,
Ի՞նչ ենք մենք այժըմ—այդ էլ է խաւար...

Լոկ փորձն է ասում, որ այստեղ արդէն
Մեղնից առաջ էլ մարդիկ են ապրած,
Ապրում ենք և մենք, յետոյ էլ կապրեն—
Ահա ի՞նչ զիտենք և ի՞նչ է եղած. . .

Գետի էն կողմէ լեռան վըրայ
Կանաչ անտառն աղմբկում.
Լեռան տակին, գետի ափին
Մի խըթիթ է երևում:

Այն անտառում երգ է երգում
Բըլըուլն անուշ, բարձրաձայն.
Այն խըթիթում կին է ապրում—
Այրի, ջահէլ, մեն - միայն:

Եւ այդ զիշեր—կէս զիշերին
Պէտք է կըտրիմ, տաք-արիւն
Ջահէլ մի տղայ ջահէլ այրուն
Գար անպատճառ տեսութիւն...

Ուշ զիշերին ձուկ էր որսում
Զկնորսն զետում թռու զըցած.
Քէֆ անելու, զիշերելու
Դէպի խըթիթ նա լողաց:

«ԱՌ իմ ձըկնորս, այ իմ հոգեակ,
Մի՛ գար դու իմ օթեան.
Իմ սկեսրարը տանն է այսօր,
Սիրելի՛ չիս դու նըրան:

«Մի՛ նեղանար ու յետ գարձիր
Զըկնորսական քո տընակ.
Եգուց արի, մէկ տեղ ապատ
Մենք քէֆ կանենք մեն - մենակ:»

—ԱՌ, քամի՛ է, սասամի՛ քամի
Գիշերն է մո՞ւթ, ուր զընամ...
Լաւ է այստեղ, զետի վըրայ
Մինչև լուսը կը մընամ:

Ուշ գիշերին մի սովորաքար
Կէս ձամբին էր մընացած.
Ճամբէն ծըռեց, ջահէլ այրուն
Գիշերելու նա գընաց:

«Զան սովորաքար, ի՞նչով այրիս
Քեզ այս ժամին մեծարի...
— Ոչ խրճիթն եմ վառել այսօր,
Ո՛չ խոտ ունեմ, ոչ գարի:

«Լաւ է, շտապես, դու գեղ գընաս,
Սանտէրիս հիւր լինես.
Միայն, տե՛ս համ, էզուց ինձ դաս,
Աչքիս վըրայ տեղ ունես:»

— Գեղն հեռու է, համ էլ խեղձ ձիս
Էլ շարժուելու հալ չունի.
Ես ամեն բան հետս եմ առել
Հոգիս, դու հոգս մի՛ անի:

Երէկ սաղ օր քաղաքն էի,
Այնտեղ առայ ամեն բան.
Ահա վաղուց քեզ խոստացած
Եւ իմ ընծան պատուական:

«Ա՛խ, չեմ ուզում ես քո ընծան...
Համ քէֆըս չէ իրա աեղ:
Գլուխըս սաստիկ ցաւ է բըռնել.
Սանսահէրիս գընա՛ գեղ:

— Է՛հ, էդ ցաւը դատարկ բան է,
Ես ձար ունեմ քո ցաւին.
Երկու խօսք է, կասեմ, ձեռաց
Ցաւըդ կանցնի, իմ անգին:

Ահա շողաց լոյս ու կըրակ
Ջահէլ այրու խրճիթում:
Նա թանկագին իր հիւրերին
Արդէն հաց է պատրաստում:

Զըկնորսի հետ հացի նըստած՝

Քէֆ է անում սովորաբար.

Պատուհանից աչք չե պոկում

Կըտրիճ տըղան՝ սիրտը վառ...

—Զըկնորս ախպէր, գինի խըմի՛ր,

Համ ինձ ածա, համ այրուն.

Թէ շնորհք ունես, վի՛ր կաց, մէկտեղ

Պար դանք, երգե՞նք ես ու դուն:

Ես սիրում եմ միշտ մարդու հետ

Զան ասել ու ջան լըսել.

Չեր փեշակն է—որսը բըռնել,

Մեր փեշակը—որս դընել...

Դէ, խնդրում եմ, հետը վալուի՛ր

Պարզ, հասարակ, եղբօր պէս.

Ա, մեն մի լաւ, բարի մարդուն

Այ ի՞նչ խրատ եմ տալիս ես.—

Երբ դարդ ունես—դարդ մի՛ անի,

Երբ գործ ունես—գործ արա.

Իսկ տեղն եկաւ —էդ երկուսն էլ

Մուացի՛ր ու քէ՛ֆ արա:

Ու ըսկսեց սովորաբարը

Զըկնորսի հետ համ երգել

Համ պար գալով՝ ջահել այրուն

Համ պաչպէչել համ գըրկել...

Զըկնորսիրեց կըտրիճ տըղան,

Սիրուն ու հոգին կըմկ առաւ.

Աչք ձըպելում՝ զուռը բացեց,

Կայծակի պէս ներս թըռաւ...

Եւ այդ օրից էլ խըրճիթում


Մարդ չի ապրում... նա միայն


Եւ ամայի՛—լոկ բըլըուլն է

Շուրջը երգում բարձրաձայն...

Նիկոլա Ալեքսեվիչ Նեկրանով


(Ծնաւ 22 նոյեմբ. 1821 թ. վախճ. 27 դեկտ. 1877 թ.)





Ժայռություն

ԲԱՐԱՄԱՆԵՐԻ ԹԻՎԻՆԵՐ



ԲԱՆԱՏԵՂՑՈՒԹԻՒՆԵՐ ՆԵԿՐԱԾՈՎԻ

Երազ էր ... Ժայռի գաղաթին կանգնած՝
Ես ուզում էի ինձ ծովը նետել.
Յանկարծ ինձ յուսոյ հրեշտակ երևաց
Եւ անցյա ձայնով ըսկսեց երգել.

«Սպասի՛ր դարնան: Ես կը դամ շուտով,
Կը դամ, քեզ կասեմ—մարդ եղի՛ր նորից,
Մըսայլուած միտքըդ կը վառեմ լուսով,
Թըմբեցնող նիրհըդ կըցրուեմ աչքից:»

«Կը տամ քեզ նորից երջանիկ օրեր,
Նո՞ր ոզի կառնէ մուսադ ինձանից.
Եւ զու բախտաւոր՝ կը քաղես հասկեր
Քո նուիրական չը հնձուած արտից»:

ՍԻՐՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔ...

ՆԵՐԻՌ

Ների՛ր... Մի՛ յիշեր դու օրելն անկման,
Օրերը վըշտի և վըհասութեան.
Մի՛ յիշեր ոչ ցաւ, ոչ դառն արտասունք,
Ոչ խանդու ոլրտի զայրոյթ ու յուղմունք:

Բայց, ախ, այն օրելն, երբ ոսկեպըսակ
Մեզ փաղաքշում էր դարնան արեգակ,
Երբ մեր ուղին էր պայծառ, լուսավառ,—
Այն օրելն օրհնի՛ր և մի՛ մոռանար:

Սիրուն հայրենիք, դեռ այսպէս ուրախ, ջերմ զգացումով
Երբէք չեմ անցած ես քո դաշտերով:

Տեսնում եմ մանկան մայրական զըրկում անհոգ խաղալիս
Եւ վըսեմ մըտքեր յուղում են հոգիս:

Բարի՛ ժամին ես դու աշխարհ եկել նազելի՛ մանուկ,
Դու էլ չես տեսնիլ ձորտի արտասուք:

Դու մանկութիւնից, հեռու կապանքից, անվախ ու ազատ
Քեզ զըաղմունք կընտրես՝ սըրտից հարտղատ:

Կուզես—դու անվախ երկինք կըթրոչես, սէդ արծուի նըման,
Կուզես—դու յաւետ կըմնաս շինական:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՆԵՐԲՈՂ

Բարի՛ գործեր են կեանքըդ զարդարում,
Քեղ մարդ չե՛ հասնի իր շնորհք ու գործքով
Եւ—օհ, երկինքն եմ ես վըկայ բերում—
Որ քեղ յարգում եմ խորի՛ն յարդանքով... .

Դու ձանձին անդամ չես հասցնի չարիք,
Պատրաստ ես օգնել և՛ չարագործին.
Եւ չե՞ն գողնովի քո անբաւ բարիք,
Զե՞ս զըրկած անտէր խեղձին ու որբին:

Որպէսզի բաներդ երթան աջողակ,
Զե՞ս ձըգտում «Հզօր մարդու» խնամութեան,
Եւ ծուռ մըտքով չե՞ս նրա հետ մենակ
Թողնում քո հասուն, սիրուն աղջըկան... .

Զե՞ս գարշում երբէք դու անուս, կոպիտ
Ուամկան գասի անմաքուր տեսքից,
Եւ մեծամօրուս ազգակիցներիդ
Զե՞ս քըշում բոռոնցքով քո դըռան շեմքից:

Ձե՞մ հարցնիլ—մւսկից և եր՞բ ձեռք բերար
Ո՞յն բոլորն, ինչ որ դու ունես հիմայ.
Գիտեմ, քո ազնիւ գործերի համար—
Ո՞ղջը երկնից է թափուել քո վըրայ...

Բարի՛ գործեր են կեանքըդ զարդարում,
Քեղ մարդ չե՛ հասնի իր շնորհք ու գործքով
Եւ—օհ, երկինքն եմ ես վըկայ բերում,—
Որ քեղ յարգում եմ խորի՛ն յարդանքով... .

Օ՛, ԵՐԳԵ՛Ր, ԵՐԳԵՌ...

Ո՞, երգեր, երգեր—միակ վըկաներ,
Աշխարհի համար թափած արցունքիս.
Զեղ միշտ ծընում են դառնաղէտ ժամեր,
Երբ փոթորիկ է պաշարած հոգիս...

Ծընվում էք, դիմչում մարդկանց սըրտերին,
Որպէս ալիքներ կարծըր ժայռերին...

44

ԵՐԲ ԱՂԵՐՍԱԼԻ...

Երբ աղերսալի խօսքով համզման
Ես աղատեցի քո կորած հոգին
Մաշիչ խաւարից անկման, մոլորման.
Եւ ողջ էութեամբ գու խոր տանջանքին
Անձնատուր եղած՝ զառն անիծեցիր
Քեզ պատող արատն—ու արտասուեցիր.

Երբ գու անցեալի տըխուր յուշերով
Մոռացկոտ խիղըրդ պատուհասելով,
Ինձ պատմում էիր քո կեանքի արկած,
Այն բոլորն, ինչ որ առաջ էր եղած.

Երբ դէմքըրդ յանկարծ ծածկելով ձեռքով,
Դու լի՛ ամօթով լի՛ զարհուրանքով,
Խոր հեկեկացիր անզուսպ, դառնազին,
Խռովուած էր քո միտքն, խռովուած—քո հոգին.

45

Հաւատա՛, այնժամ ես անփոյթ չէի,
Ես անյագ ուշով քեզ լըսում էի...
Եւ, զըմբախտ էակ, ես քեզ հասկացայ,
Ո ղջը ներեցի, ողջը մոռացայ:

Բայց էլ ի՞նչու ես գաղտնի վարանքին
Դու ամեն մի ժամ տուած քո հոգին.
Մի՞թէ անհեղեղ կարծիքին մարդկանց
Դու էլ ես արդէն զըլուխ խօնարհած:

Ու մի՛ հաւատար դու կեղծ ու պատիր
Ամբոխի խօսքին—և հեռու վանի՛ր
Քեզնից կասկածանք, մաշող զգացմունք—
Երկոտ սըրտիդ մէջ թագուցած խորունկ:

Զուր տառապելով անձնատուր թախծին,
Ո՞ւ մի՛ ջերմացրու քո կըսծըսում օձին...
Եւ դու սիրակոչ ազատ, համարձակ
Մըտի՛ր տիրուհի իմ տան յարկի տակ:

ԳԻՇԵՐ Է...

Գիշեր է... Քընի ախորժանք չըկայ,
Սրդէն վայելած ամեն զուարծանք,
Մենք աղօթելու պատրաստ ենք հիմայ,
Միայն չըգիտենք—ում՝ ի՞նչ յանկանանք:

Յանկանք մենք նրան դիշեր բարերեր,
Ով յանուն Փըրկչի համը է և համբեր.
Ում զըմնեայ աչքից մ'ն հոսում արցունք,
Ով չէ տըրտնջում, միշտ փակ են շըրթունք.

Ում կոշտ ձեռքերը միշտ բան ու գործում,
Տալիս է հընար մեզ առօք-փառօք
Թաղուել արուհստի, զիտութեան ծոցում,
Սիրել անուրջներ, ախտերի՛ բորբոք...

Ով միշտ խաւարում անլցյս, անթափանց,
Անգիտակ—ի՞նչ է իրաւունք, Աստուած,
Անդե՞կ է կեանքի շաւզովն աստանդում՝
Որպէս անձըրագ ստորերկրեայ բանտում...

ԵՐԱՆԻ ԱՆՉԱՐ ԱՅՆ ԲԱՆԱՍԵՂԾԻՆ...

Երանի՛ անչար այն բանաստեղծին,
Ում մաղձն է սակաւ, զգացումը—լե՛.
Ողջագուրճում են նրան սըրտագին
Բարեկամները խաղաղ արուեստի:

Ամբոխի միջում նրա ականջին
Անվերջ համնում է շցիչ համակրանք.
Օտար է նրան կասկածանք ներքին—
Ստեղծագործ ոգու այդ խորի՛ն տանջանք:

Անձնատուր անփոյթ և հանգիստ կեանքին,
Խըստաշունչ հեգնող նա երգն ատելով,
Խոր տիրանում է ամբոխի սըրտին
Իր խաղաղասէր, շցիչ քընարով:

Զմայլվում, տարվում են նրա մեծ խելքից,
Չունի նա նեղիչ շունի՞ բամբասող.
Եւ նրան մարդիկ ժամանակակից
Մահից առաջ են պատրաստում կոթող...

Բայց վայ այն երգչին, որ քաջ, անվեհեր
Հանդէս է հանում աղնիւ հանձարով
Ամբոխի ախտե՞ր ու մոլութիւննե՞ր—
Բախտն է դէպի նա անգութ, անգորով:

Կըրծքում սընուցած սերմն ատելութեան,
Չինուած հեգնանքով, ծաղըր—շըրթունքին,
Նա միշտ անցնում է տատասկոտ ծամբան՝
Իր պատուհասող քընարը ձեռքին:

Եւ մատնուած անգուսպ, չար պարսաւանքի,
Նա զըրուատներին ականջ է դընում
Ոչ անոյշ խօսքում փառքի ու գովքի,
Այլ գոռ ու վայրագ աղաղակներում:

Վառ ցընորներին իր վըսեմ կոչման
Եւ հաւատալով, և՛ կասկածելով,
Նա կեանքում սէր է քարոզում մարդկան,
Քարոզում ժըխտիչ հակածառ լեզով:

Եւ նրա խօսքի ամեն մի հընչեւն
Ծընում է անհաշտ թըշնամիք դաժան՝
Թէ՛ դատարկամիտ, թէ՛ խել թէ՛ գիտուն—
Ամենքն էլ պատրաստ խաչելու նրան:

Անէծք են թափում չորս կողմից վըրան...
Բայց մարդիկ նրա մահը տեսնելով,
Ի՞նչել նա արեց—այնժամ կիմանան,
Եւ ի՞նչպէս սիրեց—նա միշտ ատելով...

Նա հետ կին էր—մայրը բազմահոգ ու թշուառ,
եւ նրա շուրջ մինչդեռ զուարթ ու կայտառ,
վրիսում էին երկք փոքրիկ մանուկներ,
Մայրը յառած մանկանց վրայ իր աչքը,
Կի տըխրութեամբ մըրմընջում էր. «Ո՛յ որդիք,
երանի՞ դուք իսկի աշխարհ չը դայիք.
Անշեղ կանցնէք դուք ձեր ուղին, բայց էլե՝
Միշտ կը մընոք ճակատազրին խեղճ գերի...»

Մի՛ պըղտորիր զաւակներիդ ջինջ հոգին
Քա վըշտերով այ ցաւատանջ, զըժբախտ կին.
Պատմի՛ր նրանց, պատմի՛ր մանուկ հասակից,
Որ կան օրեր, կան ժամանակ ու տարիք,
Երբ կեանքի մէջ տատասկահիւս պըսակից
Զը կայ ոչինչ—առաւել քաղցր, երջանի՛կ...

Ոչ չեմ յիշում երբէք ես մեղմ, գըգուալի,
Գողարի՛կ տաղեր չքնաղը քընքոյշ մուսայի.
Որպէս ոզի, նա երկնային բարձունքից
Զէ սաւառնել անլըսելի դէպի ինձ,
Զէ վարժեցրել իմ լըսելիքն մանկական
Հարթ, ներդաշնակ տաղերգութեան դիւթական.
Եւ ոչ սրինդ է թողել նա իմ որրանում:
Տաղեկ կեանքիս խոկումներում, խաղերում
Նա չէ յուզել միտքըս աղօտ ցընորքով,
Ոչ ցոլցել յանկարծ գեղուն իր դէմքով,
Որպէս սիրող ընկերուհի սըրտագին,
Զմայլած աչքիս—իմ այն գարուն հասակում,
Երբ շաղկապուած սէրն ու մուսան անմեկին
Կի անձկութեամբ մեր արիւնն են բարբոքում...

Բայց ինձ վըրայ վաղ ծանրացան լուծ, կապանք,
 Այլ մուսայի՝ աչքից ընկած, անդրգումնք,
 Որ միշտ կեանքում ուղեկցելով խեղճերին,
 Հետ վըկայ է նրանց ցաւին, վըշտերին.
 Այն մուսայի՝ լայնող արքամնղ ու ցաւող,
 Միշտ տենչացող, միշտ զըլխակոր աղերսող
 Որի աչքում միակ անհաս պաշտելին,
 Երազ-կուռքը—լոկ ոսկին է ու ոսկին...
 Եւ այն օրից, երբ ես եկայ լոյս աշխարհ,
 Որպէս հաճոյք և քաղցրութիւն ինձ համար,
 Հին խըրճիթում, մըխող ձրազի առաջին,
 Ցաւից սպանուած, գործի բեռը կոր մէջքին,
 Նա երգում էր—և նրա պարզ վըշտառատ
 Երգում անվերջ լըսելի էր մի՛ գանգատ:
 Իսկ երբեմն էլ յանկարծ նեղուած սուր վըշտից,
 Նա ողբում էր՝ իմ ողբանքին ձայնակից.
 Կամ խոռվում էր նա իմ նիրհը մանկական
 Շուայտ կեանքի խինդ ու տաղով... Եւ, սակայն,
 Նոյն լաց-հառաջն աւելի էր խիստ հընչում

Նրա այդ նոր աղմկալից խրախճանքում:
 Եւ ի՞նչ չըկար այդ խելայեղ խառնուածքում—
 Նանիր կեանքի մանր ու գըծուծ հաշիւներ,
 Մատղաշութեան տե՞նչ ու ցընողք գեղեցիկ
 Խեղդումնք և խորտակումն յոյս ու սէր,
 Անէ՛ք, բողոք և ուժազնուրկ սպառնալիք...
 Եւ սրբումըտած՝ անխել մուսան երդվում էր
 Կեղծիքի դէմ յամառ կըռիւ ըսկսել...
 Նա խաղում էր օրոցքիս հետ մոլեգին,
 Իրան տուած ժանդ ու վայրագ հրծուանքին.
 «Վրէ՛ժ» էր կոչում—և հուր, որոտ երկնքից
 Ցասկոտ լեզով կանչում իրան աջակից:

Բայց զըմնութեան փոթորկայսյուղ բըռնկումն
 Հաստատուն չէր նրա սիրող մեղմ սրբտումն.
 Մաշիչ ցաւը կամաց-կամաց մեղմացած՝
 Հանդարտվում էր ու թուլանում... և յանկարծ
 Ողջ այդ վայրի կատաղութիւնն կըռքերի,
 Այդ զըմնաշունչ սաստկութիւնը վըշտերի

Քաղցր հատուցում, վերկանք էին ըստանում
Այն գեղեցիկ և վեհապեղն ըոպէում,
Երբ հէդ մուսան թեքուած վըրաս լիազութ՝
Շըշնջում էր. «Ների՛ր, ների՛ր թըշնամուգ»:

ԾՆՆԴԱՎԱՅՐՈՒՄ

Եղապէս մի կոյս՝ յաւէտ լացող անմեկին՝
Ինձ երգում էր իր երգերը խըստաղին,
Մինչ վերջապէս, և՝ նրա դէմ կատաղե
Սովորական հերթով ելայ ես կըռուի:
Բայց ամուր կապն, որ իրար էր մեղ կապում
Մանկութիւնից—մուսան իրզել չէր շտապում:
Նա շըրջեցրեց ինձ անդունդներ չարքի,
Կոպիտ ոյժի, քաղցի, վըշտի, կարիքի.
Եւ իմ հոգին մըտերմացրած իր ցաւին՝
Օրհնեց, որ այդ ցաւը պատմեմ աշխարհին...

Ա՛յ Ճոխ արտեր՝ լի՛ հասկ բըռնած՝
Իմ հայրենի աշխարհի.
Դուք ծաղկում էք, բայց ես քաղցած,
Ես հազե՞ւ եմ կենդանի:

Է՛հ, այսպէս եմ ծընուել մօրից,
Ա՛յսպէս է զիրն իմ Ճակախ,
Ու Ճորտերի ցանած հացն ինձ
Ու մի օգուտ չի տալիս...

Երկնի ծայրին ամպ է կիտում
Տըխուր, լալկան ցուրտ քամին
Մութ անտառը խուլ շըշնջում;
Հեծում ջարդուած եղեին:

Թառից տերեն հողմահալած
Դէպի գետափ սըլանում.
Փըզում է ցուրտն—ու զայրացած
Չոր, խըստաչունչ ձայն հանում:

Մութ է պատել ամենուրեք,
Մութ տաղտկալի՛, տըխրաբե՛ր.
Ճիչ են բառնում խեղճ, ահարեկ
Օդում ճախրող ագռաւներ:

· · · · · · · · · · · · · · · · · ·



Խընջըք կոչուած՝ շտապ անցնելիս աղտուցեխով լի ըուկան,
Երէկ յանկարծ ինձ ապշեցրեց մի այլանդակ տեսարան.
Հացավաճառն, որի տաշտից թըռցրել էին կըտոր հաց,
Լեղին պատառ ու գունաթափ, լաց-վայնասուն բարձրացրած՝
Տաշտը թողել ու վաղում էր. «Բլոնէք գողին» բոռալով
Եւ բըռնեցին հացի գողին՝ չորեք կողմից վրայ տալով:
Կըծած հացը բըռնած ձեռին՝ գողդողում էր խըղճալին,
Հաղար տեղից սերթուկը ծակ, կօշիկ չուներ ոտքերին. Հ
Դէմքի վրայ հիւանդութեան ու տանջանքի թարմ հետքեր,
Ամօթ, աղե՛րս, երկիւղ էին արտայայտում թաց աչքեր...
Յայտնուեց իսկոյն և՝ ոստիկան, պահապանին ձայն տուեց,
Մեծ խըստութեամբ և կէտ առ կէտ նա հարց ու փորձ ըսկեց...
Վերջն էլ գողին առան քաղցած ու հանդիսով բանտ տարան.
Ես կոչեցի կառապանիս. «Քըշե՛ր, գընա՛ քո ճամբան».
Եւ փութացի ջերմ գոհութիւն, օրհնանք ուղղել առ Աստուած,
Որ ինձ կեանքում ժառանգական կըտոր հաց էր պարզեած...
X

ԱՆՑՆՈՒՄ ԵՆ ՏԱՐԻՔ... ✓

Անցնում են տարիք—և ես զգում եմ,
Սպառվում են շյժերս, սառչում—իմ արիւն.
Օ՛, քաղցր հայրենիք, գուցէ ես մեռնեմ;
Աչքով չը տեսած քո աղատութիւն:

Բայց մահուան ժամին կուգէի սրբառվ
Զգալ որ լայն է քո բըռնած ուղին.
Որ մըշակ որդիդ դաշտը հերկելով,
Մընում է պայծառ, փըրկաւեա օրին...

Կուգէի, որ քո հեղաշունչ քամին
Ականջիս հասցնէր մի ձայն անուշեկ,
Կախարդիչ մի ձայն, ուր էլ մարդկային
Չը լըսուէր լաց-կոծ, արեան փոթորիկ...

ԷԼԵԳԻԱ

(ՅԱՏՈՒԱԾ)

Թող մեր արդի խախուտ մօդան պընդէ միշտ,
Որ հին նիւթ է—«ժողովըրդի ցաւն ու վիշտ»,
Որ արուեստը պէտք է նրան մոռանայ.—
Մի՛ հաւատաք, չէ հընանում երբէք նա:
Երանի՞ չէ տարիներից նա մաշուէր,
Աստծոյ աշխարհն այնժամ զուարթ կը ծաղկէր.
Բայց քանի դեռ ազգեր նեղուած ու աստանդ
Կեանք են վարում՝ խարազնին հընազանդ,
Որպէս նիշար հօտեր այրուած դաշտերում.—
Նրանց ու օրն պէտք է ողբալ երգերում.
Նրանց պէտք է սպասաւորէ միշտ մուսան,
Եւ այդ դաշն է ամենից վեհ, սըրբազնն...
Ժողովըրդի ցաւն ու դարդը յիշեցնել
Ամբոխ դասին, երբ խրախճանքին անձնու եր՝

Նա անփոյթ է, նա խընդում է ու երգում:
Նարժել խիղճը հըզօների չոր կըրծքում;
Նրանց ուշքը հանուր վըշախն դարձնելով.—
Օ՛, դրանից էլ մեծարժան, մեծագով
Ի՞նչ նըպատակ, ի՞նչ կոչում կայ, ընկերներ,
Որին պօէտն իր քընարով ծառայէր...
Ես հէգ ազգիս նուիրեցի իմ քընար.
Գուցէ, մեռնեմ նրան անյայտ ու օտար,
Բայց ես նրան ծառայեցի—և խաղաղ,
Հանգիստ խըղճով կը ողջունեմ ցուրտ դագաղ:
Կըոիւ, կըոիւ ազգի համար եռանդուն.
Թո՞ղ չը յաղթէ ամեն կըուուղ թըշնամուն,
Թո՞ղ նա ընկնի... Բայց ամեն մէկն, սիրելիք,
Պէտք է անշուշտ նետուի կըուուի փաթորիկ...
.

Օ՛Ր-Օ՛Ր-Օ՛Ր-Օ՛Ր

Ճընշում է կուրծքըս անձկութիւն անյագ,
Տանջանքին յաղթել չեմ կարողանում...
Եւ, որպէս զոհին դէպի սուր դանակ,
Ինձ մահի դուռն է իմ ցաւը տանում:
Ո՞ւր ես, ո՞վ մուսաս, ո՞ւր—երգըդ նախկին.
«Ես էլ երգ չունեմ, հայեացքըս անլոյս,
Հազիւ եկել եմ՝ յենուելով փայտին,
Ու ասեմ—մեռնենք, էլ չըկայ մեզ յըս»:

Եւ ես լըսում եմ, ինչպէս բահ, թիակ
Խուլ թըրեակթըսկում են... և ապա լըսում...
Եւ չըկայ մուսաս—իմ կարող հըեշտակ.
Եւ հանգ հիւսելն է ինձ դաւաճանում:
Բայց այդ խորանինց գիշերուայ ժամին
Ես միայնակ չեմ... Ահա սքանչելի

Մի ձայն է հասնում իմ ականջներին—
 Այն մօրս ձայնն է. «Որդեակ սիրելի,
 Ժամ է, ժամ է քեզ—տառմ է նա ինձ,
 Որ միջօրէի այդ կիզեւ տապից
 Դու աղատ՝ զբանես խաղաղ օթևան,
 Նընջե՛ր, իմ ղաւակ, նընջե՛ր, աննըման.
 Առ քեզ վաստակիդ ցանկալի պըսակ,
 Ստրուկ չես այլ ևս, այլ—պսակուած արքայ,
 Չես մաշուիլ այլ ևս ծանըր բեռի ատկ,
 Ոչ չէ կարող իշխել քո վըրայ»:

«Մի՛ վախիր շերմից—օտար չէ նա ինձ,
 Մի՛ վախիր, թէ կան որոտ ու կայծակ,
 Մի՛ վախիր թոյնից և ոչ էլ սըրից,
 Երկիւղալի չեն շըղթայ ու մըտրակ.
 Մի՛ վախիր հողմից, ահեղ փոթորկից,
 Անսուտ օրէնքից, ապօրէն գործքից,
 Մի՛ վախիր—էլ լաց, հառաչք մարդկային
 Չեն յուղել մաշուած քո սիրտն ու հոգին»:

Քընի՛ր, մարտիրոս, հեղ համբելատար,
 Եւ դու կը տեսնես հայրենի աշխարհ
 Աղատ ու հըպարտ, քաջ ու բախտաւոր,
 Քընի՛ր դու հանդիստ... Օր-օր-օր—օր-օր:
 Դեռ երէկ մարդկանց չարաթցին լեզուն
 Այնքան անարգանք հասցրեց քո հոգուն.
 Բայց դու աներկիւղ ողջունի՛ր մահուան,
 Վերջ ամեն ինչին, վերջ և չարութեան...
 Մի՛ վախիր, հոգեակ, և զըրպարտանքից,
 Դու տօւրք կենդանի հատուցիր նրան.
 Մի՛ վախիր ձըմրան դըմնդակ ցըրտից,
 Ես քեզ կը թաղեմ ջերմաշունչ գարնան»:
 «Մի՛ վախիր թոյնից գառնի մոռացման,
 Տե՛ս, արդէն, որդեակ, բըսնել եմ ձեռքիս
 Պըսակը սիրոյ, պըսակը ներման,
 Որ հայրենիքն է քեզ պարզե տալիս...
 Յամառ գիշերին կը յաղթէ ցերեկ
 Եւ հայրենիքումդ զու ամենուրեք
 Կը լսես, ինչպէս բըսնած սար ու ձոր՝
 Կը թընդայ քո երգն ... Օր-օր-օր—օր-օր...»

ԾԵՐՈՒԿՎ

Անզօր մարմինըս հանդիստ է խնդրում;
Հոգիս առջորում մի գաղտնի փափագ...
Վայ քեզ՝ ծերութիւն, այդ կեանքն է հեզնում;
Եւ քո երեսին ասում համարձակ.—

«Ել զ՞ուր ես ձրկտում դու վայելքներին,
Բանականութեան սիրտը խոնարհիր,
Եւ ականատես քո տանջանքներին՝
Անզօրութիւնը ըղբալով—մեռիր...»

ՕՐՀՆԵՐԳ

Աստուած, տուր ազգիս բարիք ամենայն,
Օրհնիր ազգային և՛ գործ, և՛ վաստակ.
Ազգում ազատ կեանք, արդար դատաստան
Հաստատուն պահիր ամեն ժամանակ:

Որպէսզի ազատ աճեն, զարգանան
Նորածիլ գործքեր՝ ազգին շահաւոր,
Սփոփիր ազդի մէջ Դու սէր զիտութեան,
Ցոյց տուր ուսմունքի ուղին լուսաւոր:

Եւ մի՛ թող տանջուիլ մաշեչ լըծի տակ
Այն ընտրեալներիդ չար կապանեքներում,
Որոնց ձեռք մի օր Դու լուսոյ գրօշակ
Աիրով պիտի տաս հայրենի երկրում...»

ՀԻՒԱՆԴԱՆՈՑՈՒՄ

Ահա այս էլ հիւանդանոյն: Կիսարթուն
Վերակացուն հազիւ աչքը բանալով,
Ճրագի լուսով մեղ ցոյց տուեց մի անկիւն.
Սյնտեղ կեանքի վերջին օրերն համրելով,
Դանդաղ կերպով, անտուն - անտէր, բարձիթող
Շունչ էր փրչում աղքատ, ազնիւ մի զըռող:
Եւ ակամայ նախատեցինք մենք նրան,
Որ մարդաշատ այս քաղաքում նեղն ընկած՝
Նա չէր տաել մօտիկ մարդկանց ոչ մի բան,
Եւ ապաստան հիւանդանոյն էր ընտրած...

«Է՛հ, ի՞նչ կայ որ», — տսաց նա մեղ հանաքով
«Կեանքըս խաղաղ անց է կենում և այստեղ՝
Ես նայում եմ շուրջը դիատղ հայեացքով
Եւ շատ բան եմ զըտնում, իրաւ, — հանձարեղ

Մեր Գօգօլի գըռչին արժան այս վայրում...
Ահա, նայէք այն պարմին, որ լըռիկ
Մահիճների չորս բոլորքն է թափառում:
Կաղմած ունի նա ծըռագիր գեղեցիկ,
Ափսոս, միայն խեղճը «մի բան» չի ձարում—
Խոշնը գումար... Թէ որ գումարն այդ ձարէր,
Վազոյ բանջարն ազամանդ կը դարձնէր.
Խոստացել է և' ինձ առնել թեի տակ,
Ու միլիօն էլ հէնց սկզբից տալ վաստակ:

«Ահա ծերուկ և' դերասան... Նա կեանքում
Անդոհունակ և' մարդկանցից, և' բախտից,
Ի՞նչ էլ ասի — միշտ երկառղ է մէջ բերում,
Սյն էլ սրխալ իր հին, սերտած զերերից:
Բարեսիրա է, ուրախ, քիչ էլ կըոռւարար,
Բայց, ափսոս, որ հիմայ քնած է (թէ՞մեռած),
Թէ չէ ձեղ էլ կընընդացնէր անպատճառ...
Համար տասը հիւանդն էլ է լուռ կեցած,
Բայց ի՞նչպէս էր նա իրանց գիւղն երազում,

Ի նշպէս մաշվում իր օջախի կարօտից,
 Վերջին զգուանք ու համբոյք էր աղերսում
 Իր սիրասուն զաւակներից, կը նոջից:
 Էլ մի՛ զարթիր, այ խըզճալի, այ անտէր,
 Հէնց այդպէս էլ թմրութեան մէջ մեռիր դու...
 Սիրող ձեռքով չեն փակուելու քո աչքեր,
 Պահապանն է, աւազ, նրանց փակելու:
 Վաղը կը զան օրապահներ, կը նայեն,
 Եւ կը ծածկն մեռածներին սաւանով,
 Հաշուով նրանց մեռելատուն կը տանեն,
 Հողին կը տան գարձեալ մի - մի հաշուելով:
 Այնուհետեւ, ով սըրտացաւ, սիրող կին,
 Իզուր կը զաս հիւանդանոց, կը փընտոես,
 Դու չես զբանիլ երբէք քո խեղջ ամուսնին,
 Թէկուղ ամբողջ մայր - քաղաքը փորփորես:

 «Հէնց նոր այստեղ ահեղ մի դէպք պատահեց.
 Գերմանացի մի ծեր պատօր իր որդուն
 Այց էր եկել - երկար, երկար որոնեց...»

«Ահա այնտեղ մեռելների կայ ջոկ տուն,
 Այնտեղ վընտուէք» — ասաց ծառան անտարբեր.
 Խեղջ ծերունին զողաց, քիչ մնաց վայր ընկնէր,
 Սըրտապատառ, զլուխը կորցրած՝ վազեց գէն,
 Եւ, ասում են, ցընորուել է նա արդէն...
 Նա շըրջում է զիակներում շարունակ,
 Աչքից անվերջ արցունք թափում աղեկէղ
 Լուռ անցնում է մէկ զիակից միւս զիակ,
 Լուռ խօնարհվում, տընդղում ամեն մի երես...
 «Ասենք, միշտ չէ այստեղ միայն օտար ձեռք
 Փակում աչքեր, ցանում վըրան վերջին հող.
 Ես յիշում եմ — տրիւնշաղախ, զրլիխն վէք,
 Մեղ մօտ բերին կէս զիշերին մի ծեր դոզ.
 Զար ընկերն էր կատաղութեան բոպէին
 Նրան բանտում վիրաւորել: Բըժըշկին
 Նա չէր լըսում, ոչ պատուէրը կատարում:
 Այլ շարունակ անհանդիսաւ էր ու սպառնում...
 Մօտենում է խնամնղ - կինը հիւանդին,
 Ցընցվում յանկարծ, ապուշկը արմանքից,

Նա լուս, կտրծես, չի՞ հաւատում իր աչքին,
 Աչք չե՞ն պոկում նրանք իրար երեսից...
 Վերջն այն եղաւ, որ արեան մեջ շաղախուած
 Այդ ոճագործն՝ հարբած, կոպէտ ու զաժան,
 Յանկարծ լոցեց, աղի-աղի հեկեկաց
 Իր անդրանիկ մաքուր սիրոյ յանդիման...
 (Մանկուց էին նրանք իրար ձանաչում)...

Կարծ միջոցում խիստ փոխուեցաւ ծերունին.
 Ամբողջ օրեր նա լալիս էր, աղօթում;
 Ուշաղիր էր և բըժըշկի պատուէրին.
 Սակայն խեղճին փըրկել էլ չիր կարելի...
 (Ես յիշում եմ այդ զիշերը արխրալի) —
 Նա պառկած էր արդէն անշունչ անկենդան,
 Իսկ սիրոյ ձայնն՝ լի՛ ներումով անսահման,
 Լի՛ աղերսով — մեղմիկ նրա ականջին
 Երշընջում էր. «Ապրիր, ապրիր, իմ անդին»...

Եւ թշուառ կինն ինչ որ ունէր, ծախծըխեց
 Ու իր սէրը փառք ու պատուով նա թաղեց...
 Օ՛, զժբախտ կին, բքան գու քիչ կեանք տեսար,

Բայց սիրեցիր նրքան և բուռն, և երկար...
 Եւ ինչ առւաւ սէրը կեանքի խընջոյքում,
 Բացի վըշտից ու աղէտից — խեղճ կընկան.
 Առաջ — ամօթ, իսկ ծերութեան հասակում —
 Աշ ու տակնապ վերջին արխուր անջատման...

«Եյստեղ կան և հեղինակներ, պարոններ,
 Ահա, նայէք, զունատ, երկըստ պատանեակ
 Գաղտազողի մեր կողմն ուղղած իր քայլեր,
 Մօտենում է ձեռքին բըռնած հաստ տետրակ.
 Գրքե սէրն է նրան ստիպել ցուրտ աշխարհ
 Գալ հարաւից, ոսքով անցնել ձիգ ձամբան.
 Խեղճն ուղում էր մըտնել փառքի վեհ տաճար,
 Գոհ է, որ գէթ այստեղ գըտաւ ապաստան:
 Իր ցընորներն ամենքին էր նա կարգում,
 Խընդայողներ ու ծաղրողներ շատ կային,
 Եւ միայն ես... ես ոչ ծաղրում, ոչ խընդում —
 Դառն մըտքեր յուղում էին իմ հոգին:
 Գրող - եղբայրներ, աղէտալի կոյ մի բան

Ճակատազրած մեր ամենքիս վիճակում:
Եթէ մեզնից ամեն մէկը գէպ իրան
Չըդղար հաւատ—այլ գործ ընտրէր նա կեանքում,
Համաձայն եմ, չէին լինի, անկասկած,
Խե՞զ զըօչակներ, ողորմելի՛ շնորհքի տէր,
Սակայն չէին լինի նշնապէս հըռչակուած
Ոչ Շէքսպիրներ, ոչ Դանթէներ, ոչ Աքօտտիր:
Կեանքի մալոր մէկին փառքի հասցնելիս,
Հաղարաւնը թցյլերին է զոհ բերում,
Բախսը կեանքում ձրսի ոչինչ չէ տալիս,
Եւ փոխարէն միշտ զսէ՞ր է նա խնդրում»:

Մեր բարեկամն այսաեղ խորը հառաջեց,
Եւ սկսուեց տակնապալի՛ զառանցանք...
Սպասեցինք, մինչ հանգարառուեց ու քընեց
Ապա թողինք ու լուռ մօտից հեռացանք:

Վ ԱՆՑՆՈՒՄ ԵՆ ՕՐԵՐ...

Անցնում են օրեր... Նցյն օդը խեղղուկ, նցյն կեանքը թշուառ,
Նցյն օրհասական շաւզի վրայ է զառամեալ աշխարհ...
Մարդկանց մէջ, ասես, մեռած, քարացած խիղճ, կարեկցութիւն,
Թցյլին, անզօրին չըկայ ոչ մի տեղ սէր ու փրկութիւն:

Բայց լըռի՞ր, երգի՞չ... Արդար զայրցյժուվ, երդով սըրտմըտած
Դու մի անիծիր մեր անզութ դարը, արարքը մարդկոնց.
Թէ զգացմունքիդ տաս ազատութիւն այժմեան օրերում,
Արցունքից հիւծուած՝ վախճանդ կլինի սոսկալի՛ անկում...

ՍԵՐՄՆԱՑԱՆՆԵՐԻՆ ✅

Լուսոյ սերմնացան հայրենի դաշտում,
Արդեօք դու հողն ես անբերրի զբանում;
Թէ սերմն է փշացած.

Թէ ի՞նքդ ես անցյժ կտմ անհամարձակ.
Տես, վըտիս բերք է տալիս քո վաստակ,
Սակաւ է լաւ հայ:

Ո՞ւր էք, ով հըմաւտ, զուարթ դէմքերով
Քաջ սերմանողներ, լիցուն պարկերով,
Ո՞ւր էք... Թօյլերին երկոտ, սըրտարեկ
Դուք առաջ տարէք:

Սերմանէք աղնիւն, սերմանէք բարին,
Սերմանէք յաւերմն—և ձեղ սըրտազին
Շնորհակալութիւն կասէ դարէդար
Հայրենի աշխարհ...

ԱԿԱՆԶ ԴԸՐԱԾ...

Ականջ զըրած մարտի աշեղ փոթորկին,
Ամեն անգամ, երբ նոր զոհ է նա տանում,
Ես չեմ ցաւում, թէ զոհն ունի ընկեր, կին,
Եւ ոչ իրան հերոսին եմ մեղքանում...
Աւաղ, կինը կը սփոփուի իր ցաւից,
Կըմոռանայ և՛ ընկերը ընկերին,
Բայց կայ մի սիրտ—միշտ բարախոնւն, սիրալից,
Նա մինչի մահ չե՛ մոռանալ հեղ զոհին:
Կեղծ ու պատիր մեր տոօրեայ գործերում,
Ուր չըկայ վերջ ամեն տեսակ լըկտութեան,
Տեսայ միակ անկեղծ արցունք աշխարհում—
Խեղծ մայրերի այն արցունքն էր սըրբազան:
Նրանք երբէք չեն մոռանալ ողջ կեանքում
Իրանց որդոց՝ ընկած արեան փոթորկում,
Ինչպէս երբէք չե՛ ամբառնալ զէպի վեր
Լայող ուռին գետին կախած իր սստեր...

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ

(ՎԱՏՈՒԱԾ)

Շուրջըս հաճար—զաշտերը լի՞ք.
Ոչ սար, ոչ ծով, ոչ ամրոց...
Շնորհակալ եմ, ով հայրենիք,
ինձ ամճքեց քո լայն ծոց:
Միջերկրական ծովից անդին,
Հեռուն, պայծառ երկնի տակ,
Ուզում էի յաղթել վըշտին,
Բայց նա տարաւ յաղթանակ:
Մաշվում էի տաղտուկ, անձայն՝
Ճակատագրից ես պարտուած.
Մէջք ծըռեցի այնտեղ նրան,
Բայց ահա շունչը ըզգացած՝
Գուցէ, ես ոյժ առնեմ կըրկին
Եւ զիմաղբեմ գոռ կըռուին...

Քոնն եմ: Փոյթ չէ, թէ իմ յեսթից
Միշտ վաղել է նախատինք.
Միշտ զերադաս օտար երկրից՝
Ես երգել եմ հայրենիք.
Եւ հիմայ էլ ես քո զըրկում:
Սըրտով անյանգ, լիտոհէր,
Քեղ եմ ահա ես պարզեռում
Իմ փայփայած երազներ.
Եւ զդածուած՝ ողջունում եմ
Ամենայն ինչ իմ չորս գին...
Ողջը տեսնում, Ճանաշում եմ—
Ահա զետերդ խըստաղին,
Որ պատրաստ են կըռուի բոնուել
Փոթորկի հետ անդադար.
Ահա սոճի Ճոխ անտառներ,
Նրանց աղմուկն հաւասար.
Մըշտախաղաղ շէներ, գիւղեր,
Լայնածաւալ ցանք ու վար...
Ահա լեռան լանջին փայլեց

Փոքրիկ տաճար — Աստծոյ տուն,
 Եւ ջինջ հաւասար նա ներշնչեց
 Յանկարծակի իմ հոգուն.
 Եւ հռու են ժըխտում, կասկած.
 Ինձ ասում է մի սուրբ ձայն —
 Մըտիր այնաեղ դու զըլիաբաց,
 Տուր քեզ իսանդի ու զըզման.
 Ուքան և ջերմ, սիրուն լինի
 Օտար երկիրն ու իր ծով
 Նա մեր ցաւին դեղ չի անի,
 Ոչ կը ցաւի մեր ցաւով:
 Վայր է վըշտի և հեծութեան
 Անշուք տաճարն քո երկրում
 Ո՞հ, նրա չափ լաց և կական
 Դեռ չն լըսած հըսումում
 Ո՞չ սուրբ Պետրոսն ձօխ, հոյաշէն,
 Ո՞չ զոհավայր Քոլիզէն...
 Այսաեղ է միշտ ազգը սիրած
 Բերել անյաղթ վեշտ, թախիծ,


Որպէս սուրբ բեռ — և թեթեցած՝
 Անխոռով ելել տաճարից:
 Մըտիր: Վըրադ պարզած ձեռքիր,
 Իր սուրբ կամքով Տէր - Փըրկիչ
 Շուտ կամքէ սըրաիդ վէրքեր
 Եւ քո ցաւոտ, հիւանդ խիղձ...
 Ականջ զըսի... էզգացուեցին,
 Մանկան նըման... Եւ երկար
 Ես լիարցունք աղօթեցի,
 Մըտած անշուք սուրբ տաճար:
 Լալիս էի և աղերսում
 Ես Սրարչին երկնքում,
 Որ պարգեէ մեղքիս ներում,
 Պաշտպան կանգնէ ինձ կեանքում:
 Որ պահպանէ ինձ իր Խաչով
 Աստուածն համայն խեղձերի՝
 Երկիր լըցնող լաց, հառաչով.
 Աստուածն իմ սուրբ աշխարհի,
 Ուր սերունդներ այս սուրբ վայրում

Պէտք է խոնարհ, չերմագի՞ն
Երկրպագեն ապագայում
Եյս աղքատի՞կ սեղանին...

ԻՎԱՆ ՍԱՎՎԻԶ ՆԻԿԻՑԻ

(Ծնաւ 21 սեպտեմբ. 1824 թ. վախճ. 16 հոկտ. 1861 թ.)





Առաքել Պետրոսյան

ԲԱՆԱՏԵՂՑՈՒԹԻՒՆՆԵՐ ՆԻԿԻՏԻՆԻ

ԽԵՂՃՈՒԹԻՒՆ

ԷՇ, դու, խեղճութիւն, միշտ սովոր լացին,
Տան մէջ համբերող ամեն դառնութեան.
Դու ընտելացած կըտոր սև հացին,
Քաշուող ու վախլուկ օտարի դըռան:

Ամենքի աչքին նայում ես երկչոս,
Անտէր ես, անձար, ամօթից սպանուած.
Անկիւն ես կանգնում հարսուտների մօտ,
Որպէս աչքի փուշ մերժուած ու լըքուած...

Դու լող ես տալիս — ուր ջուրն է տանում,
Ուր ձամբայ կըտան — այնտեղ ման գալիս.
Արև ես խընդրում — անձրեւ ըստանում,
Բերանդ են փակում՝ շետակ խօսելիս:

Գարունդ անկանաշ, գարունդ անծաղեկ,
Սիրում ես՝ կարօտ խընդալից սէրին.
Խընդում ես՝ խընդումկ անժամ ու լըռիկ,
Վերջն էլ քաղց ու ցաւ՝ ծերութեան օրին:

Ոչ կեանքըդ է—կեանք, ոչ էլ օրքդ—օր,
Հալ ու մաշ եղած, սըրտում հազար զարդ.
Մահն է վրայ հասնում, թաղվում ես դու խոր,
Վայրի ծաղեկն է գերեզմանիդ զարդ...

ԱՍՏԵՐ ՇՈՂՈՒՆ...

Աստղեր շողնւն, աստղեր պայծառ,
Երկինք կապուտակ.
Շողշողում է և խիտ անտառ
Լուսնի շողի տակ:

Զուլն է նայում, ջինջ հայելում
Անտառը նիրհած.
Անտառի լուռ թաւուաներում
Խաւարն է փըռուած:

Հընձւորներ են թըփերի մէջ
Խումբ - խումբ նըստոտել
Ծիծաղում են, խօսում անվերջ,
Խարոյկ բորբոքել:

Արօսներում մարդահասակ
Շըղթան ոտքերին,
Թափառում է մըթնում մենակ
Գիւղե ձերմակ ձին:

Եւ խոր երգ է զել ըսկսում
Աշխոյժ երգասան.
Խըմբի միջից դուրս է վազում
Գիւղե ջահել աղան:

Գըտակն առնում, օդն է նետում
Բըռնում—աչքը փակ.
Նա պարում է, նո թըռչկոտում,
Սուլում, զերթ սոխակ:

Զայն է տալիս երդին սիրուն
Լորին մարդերում:
Երդն է զընում, մարում հեռուն,
Որձակ դաշտերում...

Լըճեր փայլուն, հարթ-հաւասար,
Անծայր, ձոխ վայրեր.
Ջըռածոցեր ջի՞նջ ու պայծառ,
Ոսկի՛ ձոխ արտեր:

Վերև—աստղեր, ներքեւ—դաշտեր,
Եղեգնի՛ պուրակ...
Եւ բըղիսում են սըռտից երգեր
Ազատ, համարձակ...

ԴԺՆԱՇՈՒԽՉ ԿԵԱՆՔԻ...

Դըմնաշունչ կեանքի խըստութեան սովոր,
Անդորր հոգով եմ իմ խաչը կըբում:
Եւ չեմ աղերսում ես երկնից մի նոր,
Վարդաղարդ ուղի իմ աղօթքներում:

Ինքնահած խելքըս զըտնում է գաղտուկ
Յածախ սփոփանք և' մաշիչ վըշտում:
Գյղպէս և ծովի հառաչքն ու աղմուկ
Յածախ հիացք են մեզ վըրայ ազդում:

Սովոր եմ կըռուին անհամբոյր կեանքի,
Սովոր—փոթորկին անվերջ դառնութեան.
Փոթորիկն է միշտ աղբիւր վեհ մըտքի,
Աղբիւր—արցունքի, ոգեսրութեան...

ՄՈՒՐԱՑԿԱՆ

Իրիկուան պահուն թէ վաղ առաւօտ
Ողբեր ու այրիք՝ պարկերը մեջքին,
Գալիս, կանգնում են լուսամուտիս մօտ
Եւ ողորմութիւն հայցում լալաղին:

Անձարութիւնն է արդեօք խեղձերին,
Թէ յօժար կամքը դարձրել մաւրացիկ.
Ուշ, ձեր վիճակը դառն է, ծանրագին,
Ով անօթեան, կիսամերկ մարդիկ:

Կը ճարուեն կեանքում ձեզ մեղքացող
Զըմեռուայ ցըրտին չէք մեռնիլ անտուն.
Բայց յան է տեսնել կեղտում մաւրացող
Աստուծոյ ստեղծած բանական մարդուն:

Սակայն առաւել և խեղճ, և թշուառ
Կայ այլ մուրացիան: Նա հաց չե՛ մուրռում
Դըռնէ-դուռ ընկած, բայց հացի համար
Մաշում է կեանքը ծանըր հոգսերում:

Աղտոտ հիւղե մէջ, չոր յարդն անկողին՝
Քընում է հերոսն անել տանջանքում:
Ամուր է քարից՝ խոնջութեան ժամին.
Ամուր է պղնձից՝ հոգսի կապանքում:

Մինչ մահ նա վարում, մինչ մահ սերմանում,
Աւաղ, արլիւնքն է սպառում սև կարիք.
Մըթին երկինքն է նրա սուգն անում.
Նրա ցաւերն է երգում փոթորիկ...

ԺԱՐԱՆԳՈՒԹԻՒՆ

Հայրըս չը թողեց
Ինձ ժառանգութիւն—
Քարաշէն տըներ,
Փող հարստութիւն:

Հօրիցս ինձ մընաց
Գանձ ժառանգական—
Կըտրիճի՛ հոգի
Եւ կամք յաղթական:

Միշտ ուրախ, զուարթ
Իմ բընոյթ, իմ բարք.
Հարուստ եմ—անփող,
Հըպարտ եմ—անյարգ:

ԴԱՆԴԱՂ ՍԱՀՈՒՄ ԵՆ...

Դանդաղ սահում են օրեր, տարիներ,—
Պահիր յօյս, հաւատ սըստիդ խորքերում...
Աճիր, նոր սերունդ, անվախ, աներե՛ր,
Լայն է քո ուղեն գալիք օրերում:
Աշա մեղ շողաց փայլակ լուսաւոր,
Նայէք, մենք ծամբի ծայրին ենք կանգնած...
Մեռեալներն արդէն նիրհում են անդորր,
Գործն է մընացել կենդանի՝ մարդկանց:

Ցանվում էր սերմը կեանքում դարէդար,—
Խորհունկ է հողում նա արմատ ձըգել.
Կոցնով կարող ես կըտատել անտառ,—
Բայց չարն արմատով զըժուար է պոկել.
Եւ մեր պապերը այդ չարին սովոր,
Մանուկ օրից են մեղ այն պատուաստած...
Մեռեալներն արդէն նիրհում են անդորր.
Գործն է մընացել կենդանի՝ մարդկանց:

Թըշնամուս առաջ
Կանդնում կրծքաբաց.
Ժըպտում եմ կըռվում
Փոթորկի զիմաց:

Լաւ օր թէ վատ օր—
Երկուսն էլ սկրում,
Ինձ արար-աշխարհ
Դըրախտ է թըւում...

Ամօթ, ով անխել տըխրում է, յաւում,
 Տերե խըշշալիս—համրի է նըման.
 Փառք, ով ճըշմարտին սիրով ծառայում,
 Նրան է կեանքում զոհում ամեն բան:
 Մենք ուշ աչք բացինք, ուշ տեսանք լցու-օր,
 Դէհ, փութանք գործի միաշունչ խըմբուած...
 Մեռեաներն արդէն նիրհում են անդորր,
 Գործն է մընացել կենդանի՛ մարդկանց:

Ենւտ արէք, հողն է պատրաստ ու բերի,
 Սերմանէք, քանի փայլում է գարուն.
 Եահաւէտ խօսքի, բարի գործերի
 Սերմը չ' կորչում անհետ, ապարդիւն:
 Մենք հաշիւ կրտանք թոռներին մի օր—
 Ուր և ի՞նչպէս ենք այդ սերմը ճարած...
 Մեռեաներն արդէն նիրհում են անդորր,
 Գործն է մընացել կենդանի՛ մարդկանց:

Պ Օ Ե Տ Ի Ն

Ու մի' կոչեր դու կեանքն անշահ ու անպէտ.
 Փոթորկայոյդ խաւար օրերն անցնելիս,
 Անդուլ մըղած խըռով կաժան կըռուից յետ,—
 Նա և՛ բողբոջ, և՛ պըտուղ է մեզ տալիս:

Եւ անվերջ չեն քո այդ յաւերն ու վաշտեր...
 Քո մէջն է հենց շյժի աղբիւրն անսպառ.
 Նայի՛ր քո շուրջ—չէ՞ որ այսքան բարիքներ
 Աստուած ստեղծել Շոխացրել է քէ՞զ համար:

Թաւ անտառը գեղագանգուր ու գալար,
 Ճոխ սաղարթում արշալըսն է փայլիրլում,
 Վերից ամպերն հեղի՛կ ձեմով, հըռավառ
 Ցոլանում են գետի շողուն հայելում:

Բըլըի լանջը ծաղկեայ գորգով զարդարուն.
Վէր ել գագաթն, աչքըդ գարձուր չորս բոլոր—
Ի՞նչ սքանչելի արձակութիւն. քիչ հեռուն
Նըշմարվում է մէզում դիւզը մենաւոր:

Ազատ երգ է թըռչնիկն օդում զիլ հընչում,
Իմացի՞ր—նա ի՞նչ է երդում եթերին,
Ի՞նչ է լեցուն հասկը հասկին շըշմնջում,
Ի՞նչ է պատմում աղբիւլն կանաչ ափերին:

Ահա կեանքի, ազատութեան վեհ հանդէս,
Յաւերժափայլ այստեղ տօն է ու խրախճան.
Դու բընութեան ուսի՞ր լեզուն—և կասես—
«Այն, աշխարհն գեղեցիկ է, անվախճան:»

ՄԱՐՄԱՐ

Մենակ լնկած էր ամայի վայրում
Անշարժ մարմարը չոր մաշառներում:
Անձրեւ օր նրան երկինքն էր թըրջում,
Ու վըրան միայն թըռչուններ հանգչում:
Բայց ահա մի օր արուեստագէտին
Ցցց տուին այդ դիւտն նա անշունչ քարին
Նայե՞ց—ու իսկցն ոգեսրութեան
Շողաց աշերում հուրը սըրբազան,
Առաւ նա մարմարն, տարաւ գործատուն,
Աշխատեց վըրան գիշերներ անքուն.
Կեանք տուաւ քարին ստեղծագործ ձեռքով...
Այդ օրից ամբոխն ապշած հայեացքով
Դիասում է մարմարն, անխօս հիանում,
Եւ նրա առջեւ ծունկ է խոնարհում:

ԱՌԱ, ՆԱՆԳԻՍՏ ՏՈՒԵՔ...

ԱՌԱ, հանգիստ տուե՞ք... չանգի՞ստ եմ խնդրում
Խռովայշյղ մըտքիս, յաւատանջ կըսծքիս.
Ո՞ղջ օք եռում էր իմ շուրջ անդադրում
Այն ամենն, ինչից խոցուած է հոգիս:

Ո՞ւր փախչել մեծ - մեծ, փրքուն խօսքերից,
Խօսքով ամենքն են մաքուր, աննախանձ.
Մենք ճշշմարտութիւն պաշտողներ անբիծ
Պատրաստենք անվերջ պաշտելու մեր անձ:

Խըղճմտանք սպանուած, ամօթանք մեռած,
Խաւարում սուտն է տիրապլուխ աղատ.
Ոչ ոք չէ ողբում անկեղծ, սրբտաբաց,
Ոչ ոք չէ պատժում չարկին ու արատ:

Մենք մարտիրոսներ չունենք մեր միջում:
Զենք պատասխանում փըրկութեան կոչին.
Արեից պահվում, արեից փախչում,
Լոյսից վախում է մեր ըստրուկ հոգին:

Գուց է, օղումն է ողջ յաւն ու վտանգ.
Ի՞նչ պէսք է թօշնի—ծըլում է, ծաղկում,
Ի՞նչ պէսք է ծաղկի—կորցնում է երանգ
Եւ թըլշուառ մահով հէզ կեանքը կընքում...

ԶՄԵՌՆԱՅԻՆ ԳԻՇԵՐ ԳԻՒՂՈՒՄ

Վառ լուսինն է զուարձ դէմքով
Գիւղին լցյս ցողում:
Ճերմակ ձիւնը կապշյա ցոլքով
Շուրջը շողշողում:

Գիւղի մատուռն լուսով յեղուած,
Լուս - ամպերի տակ,
Խաչն է փայլում, խաչն է վառուած,
Ասես, վառ ճըռագ:

Լուռ է գիւղը. նա քուն մըտած,
Անշարժ, մեն - մենակ.
Բուք - բորան է խորունկ պատած
Իլրճիթ ու տընակ:

Համըր անդորր չորս դին պատել
Պատել բագ, փողոց.
Շըներն անդամ քուն են մըտել
Ջրկայ ձայն - հաչոց:

Աղօթք արած հօրն երկնաւոր,
Քնած են զիւղացիք.
Մոռացել են նեղ ու սև օր,
Սև հոգս ու կարիք:

Միայն անշուք մի խըրճիթում
Լցյս կայ տակաւին.
Այնտեղ հիւանդ՝ աչք չկ խըփում
Մի խեղճ, պառաւ կին:

Իր որբերի ալպագան է
Խորհում, գուշակում—
Իր մահից յետ, ով կընայէ
Նրանց այս կեանքում:

Վայ, ուր ասէք, չըկայ փորձանք,
Ախ, խեղճ մանուկներ...
Խելք ու խոհմունք չունեն նրանք,
Մատղաշներ են դեռ:

Երբ դէս ու դէն անդեկ, անդէտ
Նրանք ման կըգան,
Ի՞նչ զարմանք, որ չար մադու հետ
Նիստ - ել ունենան...

Իսկ այնուշետ Ճամբէն է բաց—
Կորուստի՛ Ճամբայ.
Կը մոռանան օրէնք, Աստուած,
Ամօթ չեն զգայ:

Տէր, ողորմի՛ր որբուկներին
Դըժբախտ ու խըղճուկ.
Ցոյց տուր կեանքում շիտակ ուղին,
Եղի՛ր թե - թիկունք...

Եւ կանթեղն է աղօտ փայլում,
Սփռում մեղմ շողեր,
Գունատ շողով լուսաւում
Սըբբոց պատկերներ.

Լուսաւորում խեղճ, հալ ու մաշ
Դէմքը պառաւին,
Եւ անկիւնում երկու մատղաշ
Նիրհող որբերին:

Ծուղուղու է կանչում ահա
Արթուն աքաղաղ.
Ժամն է հասել կէս գիշերուայ,
Գիշեր ձի՛ք, Խաղաղ...

ԲԱՄԲԱՍԱՆՔ

Թէկուզ վարես դու սուրբի կեանք,
Խընդաս ու լսս—Ե՞նչ անես,
Քեզ կը գըտնի չար բամբասանք,
Դուռըդ կը դայ, դահճի պէս:

Թէկուզ առնես, դուռըդ փակես,
Դըռան տակով կը մըտնի.
Թէկուզ քարէ պարիսպ քաշես,
Քարումն էլ անցք կը գըտնի:

Մեղք ու յանցանք ունես-չունես,
Իմաց կըտայ աշխարհին,
Մի՛սըդ կուտեն, քանի սաղ ես,
Բարեկամն ու թըշնամին...

ԱՂԻ ԱՐՏԱՍՈՒԻՔ

Այլոց տանջանքին ատիկար վըկայ,
Ապրեցի՝ կեանքըս անշահ վատնելով.
Եւ ոխակ խիղձըս ըսթափուած ահա,
Երեսս է այրում ամօթի հըռով:

Այլոց ցաւերով ես յուզվում էի,
Քուն - հանգիստ չունէր իմ մաշուող հոգին,
Ես միշտ երկնչում, ես միշտ լուռ էի,
Եւ անդօր եղայ օգնելու մէկին:

Հոգսի լըծի տակ, ուժաբեկ հոգով
իմ խըղձուկ եղբայրն հեծում էր, տընքում.
Ես նայում էի լըոիկ արցունքով,
Լալի՞ս և ձեռքով երեսըս ծածկում:

Ես լըսում էի, ինչպէս շարիքին
Ծափ էին զարկում... կըսում, համբերում.
Յուզվում էր իմ թոյլ իմ ըստրուկ հողին,
Տանջվում զյորոյթից, բայց դարձեալ լըռում:

Դարուս ոգու հետ ես մըտերմացած՝
Ընթանում էի պատրաստի՛ ձամբան.
Մարդու սըրբատիպ անձը ստորացրած՝
Անարդ մանրունքի հասցըրի նրան:

Մի՞թէ այդ դու ես, այ կեանք,—դու բարիք,
Դու մըտքի, վըշտի, մաքառման վաստակ.
Սւաղը, արիւնն է՝ քո անջնջ կընիք—
Դու, ձակատագրի սոսկալի՛ կատակ...

ԵՐԲ ՎԵՐԶԱԼՈՒՄԻ...

Երբ վերջալուսի շողուն ձաճաններ
Ոսկեզօծում են խաղուն ջըրերի
Փայլուն հայելին—և արձակ դաշտեր
Պատում են ստուեններ խորին գիշերի.
Եւ զուարձ զիւղն է լըռում՝ քուն մըտած,
Եւ ծաղկանց վըրայ, հոտոտ դալարում
Ցողն է փայլփըլում՝ երկընքից իջած.
Եւ արձաթ-շողով շըղարշ է փլուում
Մըշուն անտառի մութ-գանգուր զըլսին,—
Օ՛հ, ես այդ ժամին
Ասածոյ աշխարհին

Նայում եմ մի խոր, անյայտ հըրճուանքով՝
Եւ անգըրկելի՛, անհուն բընութեան
Անդորր ծոցի մէջ մըտքով ու հոգով
Գըտնում եմ մի քաղցր, հանդի՛ստ օթեան:

Եւ ինձ օտար են յցղեր երկրային,
Եւ իմ հոգին է այնպէս լուսավառ,
Որ, կարծես, այդ սուրբ, մենաւոր ժամին,
Ինձ հետ խօսում է արարած - աշխարհ...

ՓՈՐՈՒԱԾ Է ԲԱՀՈՎ...

Փորուած է բահով զերեզմանը խոր.
Կեանք իմ անուրախ, կեանք իմ մենաւոր,
Կեանք իմ համբերող, կեանք անօթևան,
Կեանք իմ անմըռունչ—դու զիշե՞ր աշնան.
Անցար, այ խըղճուկ, միշտ սե օրերում,
Տանգար, զերդ ճըրագն, ամայի վայրում:

Ի՞նչ արած... Քընի՛ր, իմ անլոյս վիճակ,
Յաւէտ կըծածկուես խըփով ամրափակ.
Կըծածկէ քեզ հող կը ճընշէ քեզ քար—
Մէկ մարդով միայն կը պակսի աշխարհ...
Կաս-ըրկաս—մէկ է. ում ի՞նչ ցաւ ու հոգ,
Քեզ յիշող անգամ չելինի ոչ ոք...

Ահա երգի ձայն անվիշտ, անկարիք—
Երգում է նորեկ այն խօսնակ-թըռչնիկ,
Եւ ազատ լողում օդում կապուտակ,
Երգն է հընչալի—արծաթի զանգակ...
Բայց կամաց... Երգէն վերջ կեանքի հարցին,
Վերջ և՛ երգերին, վերջ սուդ ու լացին...

ԳԵՐՍԵՄԱՆԻ ՊԱՐՏԻԶՈՒՄ

Եւ մատուցեալ յառաջ սակաւիկ
մի՝ անկաւ ի վերայ երեսաց իւ-
րոց, կաց յաղօթս՝ և ասէ. Հայր
իմ, եթէ հնար է, անցցէ բաժակս
այս յինէն, բայց ոչ որպէս նս
կամիմ, այլ որպէս Դուռ

Մատմէս գլ. հջ. էջ 60.

Ահա արևմուտն չըրէաստանի
Ոսկելառվում է՝ կրակած հորիզոն.
Եւ շուրջ թափանցիկ մէզ - մառախուղի
Շըղարշ ծաւալում նիրհուն երեկոն:
Եւ վերջալուսի շողերով վառուած,
Վեր է ամբառնում փառօք, անխըռով,
Դաշտերի գոգից լեառը ջիթենեաց
Իր անուշաբջյոր, Ճոխ այգիներով:

Եւ փայլփրլում են նրա չորս բոլոր
 կենդանանը կար, թովի՛չ պատկերներ—
 Այսաեղ պսակում են լեռ, հովիտ ու ձոր
 երուսաղէմի հոյակապ շէնքեր:
 Դէպի արևելք—Յորդանան սահուն,
 Գաբաղ, Գարազին լեռները հեռվում;
 Շուրջ՝ հովիտներ թաւշապատ, նիրհուն
 Պատկերանում են մըշուշի միջում:
 Եւ Մեռեալ ծովը, ասես, խոր քընում
 Իր յլստակ փայլով երկինք է նայում:
 Իսկ այնտեղ, հեռուն, դէպի արևմուտ
 Միջերկրականի լազուր ալիքներ
 Անզօր քերում են ափերն աւագուտ,
 Լայնաձի՞գ ափեր, որպէս պարխապներ...
 Մըթնում է... Չորս կողմն հանգի՞ստ է խորին...
 Գիշերն իր ցոլուն աստղերն է վառում,
 Եւ Գեթսեմանի պարտէզն այդ ժամին
 Լիալուսինն է վառ լուսաւորում:
 Եւ այնտեղ, թաւշեայ դալարի վըրայ,

Անուշ հովանում ձիթենիների
 Երեք - առաքեալ քընած են ահա—
 Երեքն էլ թարգման Տիրոջ պատուէրի.
 Եւ նրանց նինջը քաղցր է ու անդորր:
 Բայց ժանդ աշխարհն էր անսմափ քընած.
 Անցեալի մեղքն էր, մեղքը դարաւոր,
 Սերունդից - սերունդ նրան կաշկանդած:
 Եւ որպէս մի բիծ անփառք գյութեան,
 Կըրում էր աշխարհն անէծք նախահօր.
 Ամեն դար իր հետ բերում էր նրան,
 Խոցող վէրքի պէս, չարիք նորանոր...
 Եւ Ուսուցիչն էր միայն այդ ժամին
 Արթուն ու ըզգաստ ամբողջ աշխարհում.
 Անհաղորդ հանուր մեղքին ու չարին,
 Մարդկային անշուք վիճակն էր խորհում:
 Եւ նա անձնուէր վեհ ծըշմարտութեան՝
 Նախատեսնում էր Խաչն ու Գողգոթան.
 Եւ սըրտում վըշտի յուղմունք ու ցասում,
 Հօրն էր մեն - մենակ Որդին աղերսում:

«Ո՞հ, չայր իմ, չայր իմ, անմըռունչ թախծից
 ես տառապում եմ, հոգիս նոռաղում;
 Եւ գալիք օրուան տըխուր պատկերից
 իմ ձընշուած սըրաից արիւն է հեղում
 ես գիտեմ, այդ օրն կըդայ, անկասկած,
 Եւ Աստուածորդին ողջակէղ դարձած,
 Ամբոխի ձեռքով կը մատնուի մահուան՝
 Ազատ կեանք տալով հանուր մարդկութեան...
 Եւ թագապըսակ, տիրական գըլխիս
 կը թընդայ անէծք վայրագ խուժանի.
 Նա անարգելով սուրբ գործը Զոհիս՝
 Այդ գործը թունոտ ծաղզի կը հանին
 Եւ նրանք, որոնց Խաչիս վըրայից
 Սիրոյ, օրհնութեան շընորհ կառաքեմ,
 Նրանք չարախինդ, գոռող ոխալից,
 Չեռք կը բարձրացնեն իրանց Փրկչի դէմ...
 Ո՞հ, չայր իմ, չայր իմ, անցցէ այս բաժակ,
 Դառն է ինձ համար տեսնել, թէ ի՞նչպէս
 Չարիք է գործում աշխարհ սանձարձակ,

իր մօ'տ փըրկութեան կոյր հանդիսատես:
 Բայց եթէ, չայր իմ, Քո ժողովըրդին
 Փառք պիտի բերէ իմ անարգութիւն,
 Փոյթ չէ, մահանայ թող Մարդոյ - Որդին՝
 Հանուրին բաշխած սուրբ ազատութիւն»:
 Աղօթքն աւարտած, տըխուր, վըշտագին
 Մօտեցաւ Քրիստոս աշակերտներին
 Եւ նրանց անդորր նիրհը տեսնելով,
 Գալճաւ ու ասաց. «Վե՛ր կացէք շուտով,
 Հասե՞լ է ժամը. շուտ աղօթք արէք,
 Որ անփորձ մընաք, ըդպայթակղուէք,
 Որ ձեր սըրտերում հաւատն ամրացած,
 Հաւատով ելնէք փորձանքի դիմաց»:
 Ասաց և հանդարա հեռացաւ կըրկին
 Այնտեղ, ուր առաջ նա արտասվում էր,
 Եւ մի նոր վըշտով համակուած հոգին,
 Նա ծունկ խոնարհեց և աղօթում էր.
 «Ճայր իմ, Դու աշխարհ ինձ առաքեցիր,
 Բայց ահա աշխարհն ինձ չէ ընդունում.

Սէր քաղողեցի նրան անձանձիր,
 Բայց նա բարբառիս ականջ չէ դընում:
 Ես բուժում էի հէտ հիւանդներին
 Թըշնամիներիս համար աղօթում:
 Եւ ինձ խաբերայ կոչած՝ իմ դըլիին
 Երուսաղէմն էր սև լուտանք թափում:
 Ես մարդկանց խաղաղ կեանք աւանդեցի, —
 Մարդիկ դատով են Անպարտիս սաստում:
 Ես մեռեալներին կեանքի կոչեցի, —
 Աշխարհն ինձ համար խաչ է պատրաստում...
 Ո՞հ, չայր իմ, չայր իմ, լըսէ իմ խնդրուած,
 Անցցէ ինձանից այս դառն բաժակ.
 Դու լուսոյ ըսկիզբ, Դու սիրոյ Աստուած,
 Դու ես և՛ հըզօր, և՛ կարող միակ:
 Բայց թէ որ պիտի իմ արեան գընով
 Մեղսալից երկիրն հաշտուի երկնի հետ,
 Ես խաչ հանուելու պատրաստ եմ սիրով,
 Թո՞ղ օրհնեալ լինի Քո կամքը յաւէտ»:
 Եւ մի լուռ թախիծ սըրտում թագուցած՝

Մօտեցաւ դարձեալ երկրորդ անգամը,
 Աշակերտներին անխըռով նիրհած,
 Եւ ասաց. «Ելէք, հասել է ժամը—
 Հեռու չէ արդէն փառքի յաղթանակ,
 Անհաշտ խաւարի և լուսոյ մըրցում:
 Աղօթէք—շուտով երկրի դառն վիճակ
 Այս արեան օրը կըստանայ լուծում»:
 Ասաց և նորից նա մեկուսացած
 Զիթենիների խաղաղ հովանում,
 Մկսեց աըրտմիլ և ծունկ խոնարհած՝
 Դարձեալ լալիս էր ու աղօթք անում.
 «Ո՞հ, չայր իմ, չայր իմ, ծանր է իմ վիճակ,
 Միտքըս վարանում; միտքս մըթնանում;
 Մարդկութեան ազգի չարութիւնն համակ
 Որդուդ վըրայ է միայն ծանրանում:
 Մարդկային արատ, դարերի ամօթ—
 Ո՞ղը աանելսւ հովիս է յօժար,
 Բայց իբրև ես մարդ, ոյժի եմ կարօտ,
 Ընկճվում, լըքվում է մարմինըս տըկար...

Հայրի իմ, առաքի՛ր փըրկութիւն ազգիդ,
 Տուր ինձ կարող ոյժ սըխրագործութեան,
 Եւ ուրախ սըրառվ կը մեռնէ Որդիդ,
 Որպէս մի Մեծ Զոհ հանուր հաշտութեան...»
 Եւ նա ընկղմուեց ջերմ աղօթքներում,
 Չեռքերն ու հայեացքն ամբարձած երկինք...
 Տառապման հուրն էր նրա դէմքն այրում,
 Այտերից արեան թորում էր քըրտինք:

Եւ ահա յանկարծ փայլով եղեմի
 Իջաւ երկնքից անամպ, լուսաւոր,
 Մունետիկն Աստծոյ սուրբ հըրաշքների,
 Փըրկչ աղօթած վայրը մենաւոր:
 Հայեացքը չըքնաղ, թովիչ ու հեղիկ,
 Անցյղ լուսաշող ծակատի վըրան
 Ոգեռութեան դրոշմուած էր կընիք,
 Եւ դէմքն էր վառվում, տօթ օրուայ նըման:
 Եւ նա ծիրոջ մօտ կանգնեց քովիքով

Եւ ոգեռորիչ երկնաշունչ խօսքով
 Խըրախուսում էր արար - աշխարհի
 Աղաաչին դէպ գործ վըսեմ, քաջարի:
 Եւ ինքն էլ, նըման թեթև ըստուերին,
 Բայց լիցուն անհուն, երկնատուր շնորհքով
 Գիտին խօնարհեց ծունկերն օդային,
 Եւ աղօթում էր մի ջերմ աղօթքով:

Այդ պահուն երկիրն ընկղմուած խոր քուն,
 Անդորրութիւն էր երկնի վըայ տիրում:
 Եւ սատանան էր միայն ապարդիւն
 Տառապում մենակ իշխող խաւարում:
 Նա զիտէր, որ իր չար իշխանութեան
 Կուռքն է երերվում և մօտ է անկման,
 Որ արդէն մեղսոտ աշխարհի համար
 Թագ է պատրաստվում և Խաչ լուսավառ.
 Նա հասկանում էր — ի՞նչու քըրտնաթօր
 Այն Մեծ անպարտն է աղօթում մենակ:

Եւ խաւար ոգին ողբում էր անզօր
Լուսառաք Տիրոջ փառքի յաղթանակ:


Փայլում էր լուսին: Երկնակեաց ոգին
Ամպերի վրայով շտապում էր Եղեմ.
Եւ Աղատիչը մօտեցաւ կըրկին
Աշակերտներին: Օ՛, որքան վըսեմ,
Ո՞րքան ազգու էր Նա այդ ժամանակ.
Ո՞գեղութեան որպիսի կըրակ
Եյդ սուրբ վայրկեանին շողում էր Նրա
Զըքնաղ լուսազարդ պատկերի վըրայ:
Որպիսի պայծառ ցոլում էր փայլով
Ողջ կամքը Նրա խորունկ աչքից.
Հիանում էին աստղեր Նրանով
Կէս - զիշերային գունատ երկնքից:
Եւ Ուսուցիչը դարձաւ իր Նիրհած
Աշակերտներին ու դարձեալ ասաց.
«Ել՛ք, մե՛րձ է օրն վըշտի, տըրտմութեան,
Եւ ժամն է հասել անարդ մատնութեան»:

Եւ խուլ շաչիւնից սուր-սուսերնեղի
Նիրհուն պարտէզը իսկոյն ըսթափուեց,
Եւ չարագուշակ ցոլքում ջահերի
Մատնիչ Յուղայի չար դէմքը փայլեց...

ԱԼԵՔՍԻՑ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՉ ՊԼԵՇՏԵՎ

(Ծնաւ 22 նոյեմբ. 1825 թ. վախճ. 26 սեպտ. 1893 թ.)





ա. Թումանյան

ԲԱՆԱՏԵՂՑՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԼԵՋԵՎԻ

Յառաջ, դէպի գործ—մի գործ սըրբազան
Դիմենք, ընկերներ: Երկիւղ ու կասկած
Թող կորչեն անհետ: Ահա վըրկութեան
Տեսնում եմ արդէն ոսկի՞ լուսաբայ:

Չեռք ձեռքի առւած՝ աղատ, համարձակ
Գրո՛հ առնք միասին, յառաջ ընթանանք.
Թող մեղ վողփողի գիտութեան դրօշակ,
Ամրանան մեր ուխտ, մեր սուրբ դաւանանք:

Արդար քարոզով անվերջ նախատենք
Սըտութան մեղսոտ, խարդախ քուրմերին.
Եւ թւմրածներին դէպի կեանք կոշնեք,
Դէպի սուրբ կըռիւ դիմենք խըմբովին:

Զը կանգնենք երբէք կուռքերին բազին
Ո՞չ երկրիս վրայ և ոչ երկնքում.
Այս սին աշխարհի պատռին ու փառքին
Գլուխ չխոնարհենք մեր ծաղիկ կեանքում:

Քարողնք միշտ սէլ, սիրոյ գաղափար,
Եւ աղքատներին, և հարուսաներին.
Տանենք հալածանք այդ սիրոյ համար,
Ներելով մեղ կոյր հալածողներին...

Երանի նրան, ով ջերմ փափաղով
Սպրել է կըովում, մաշիչ հոգսերում
Ով երբէք ընկճուած, սարկական հոգով
Իր վառ յցսերը չէ թաղել հողում:

Թող մեղ ուղեցոյց փարոսի նրման,
Շողայ շողշողայ սուրբ ձըմարառութիւն.
Օ, հաւատացէք, ձայնը փըռկութեան
Զի կորչել երբէք կեանքում ապարդիւն:

Լըսէք, եղբայրներ, ձեր եղբօր ձայնին,
Եւ քանի մեր մէջ եռում են ոյժեր,
Մատաղ վառ ոյժեր—զրոհ տանք խըմբովին,
Յառաջ միշտ յառաջ դիմենք անվեհեր:

ԱՆՑԱՆ ՈՐՈՏ...

Անցման որոտ, գոռ փոթորիկ,
Անցման դաժան, մուլթ օրեր.
Դէմքը պարզեց մըթին երկինք,
Եւ սիրտն ըղբաց խինդ ու սէր:

Սակայն երկա՞ր... Ահա արդէն
Նոր թուխովեր են ծովն իջած...
Է՛շ, երեի, անբաժան են
Թուխով ու արե, խինդ ու լաց...

Ասա՛, ի նչու, այ իմ թըռչնիկ,
Իմ ժի՞ր խօսնակ-փետրաւոր,
Այզպէս վաղ ես թըռել եկել
Մեր այս աշխարհն հեռաւոր:

Տե՛ս, արեն է դէմքը ծածկել
Կորել երկինքն ամսկերում:
Դեղնած ու չոր եղեգներն է
Հողմը գետին խոնարհում:

Եւ անձրեւ է գալիս անվերջ,
Ասես Հեղեղ շըփշըփան.
Օրերն են ցուլտ ու տաղտկալե՛—
Իսկի գալնան չե՞ նըման:

«Ինձ չէ բերել այստեղ երկինք,
Եւ ոչ արև շողշողուն.

Չոր ու դեղնած եղեգներում
Ես չեմ հիւսիլ ոչ մի բուն:

«Բուն կը դընեմ խեղճ-թշուառի
Կըտրան տակին: Ինձ Աստուած
Սփոփանք է խեղճի համար
Հեռու երկրից ուղարկած:

«Երբ նա դաշտից տուն կը դառնայ,
Իր հին, անշուք օթեան,
Տըխուր կընկնի յարդի վըրայ,
Երդ կը երգեմ ես նրան:

«Ես նրան եմ բերել պարզե
Սյդ երգն հեռու վայրերից.
Բախտաւորներ զեռ չեն լրսած
Երբէք այդ երգն ինձանից:

«Ես իմ երգում կը նըկարեմ
Նրա աչքին այլ աշխարհ,
Ուր չըկայ ցաւ, չըկան հոգսիր,
Ոչ մեծատուն, ոչ թշուառ:

«Եւ այդ երգը յոգնած կը քին
Կը պարզեց հաշտութիւն.
Եւ կը նիրհէ չարքաշ մըշակն,
Յըսը զըսած Աստըծուն»:

Ո՞Չ, ԼԱԻ Է ԿՈՐՉԻԼ...

Ո՛չ լաւ է կորչել, չսքանալ անհետ,
Քան սիրել խաւար, հաշտուել չարի հետ.
Քան եղբօր անկման չարախինդ վըկայ՝
Նայել անհաղորդ, նայել անըպայ:

Ո՛չ լաւ է, որ մարդ իր հետ անբաժան
Վաղաժամ տանէ մըթին գերեզման—
Եւ սըրտի բորբոք, և հոգու յօյզեր,
Եւ լցու-անուրջներ, ոսկի՛ երազներ.

Քան փոխէ զուարձ քընի հետ անյագ
Եւ ազնիւ կըոիւ, և ազնիւ վաստակ.
Եւ ողջ էութեամբ թաղուի աննշմար
Ժահահոտ արդմում; ցեխի մէջ իսպառ...

ՊՕԵՏԻՆ

Թող անխոչ ուղին լինի վըրաւի՛չ
Դու քո վեհ կոչման, վեհ նըպատակին
Կաց հաւատարիմ; Կաց անշեղը երդի՛չ
Թէ քո երդերում, թէ դործի ժամին:

Եւ առաջ զընա—սուրբ Ճշմարտութեան
Զօրաւոր կոչին հըլու, հըպատակ
Անցի՛ր խոցոաիչ տատասկի Ճամբան,
Առանց յուսալու վըրուատ ու պըսակ:

Եղի՛ր մարտնչող անվեհեր հոգով
Պաշտպան մաղկային իրաւունքների.
Մի՛ թող որ դարուս ու արատներով,
Վարտկուի՛ հոգիդ և անարդ քընի՛:

Որպէս շանթ երկնից, որպէս հուր ու սուր,
Թող հըզօր լինի քո ոյժն երգերում.
Թէ մարէ քո ձայնն ազնիւ ու մաքուր,
Երդը չ' մարիլ մարդկանց սըստերում...

ՆԱՅՐԵՆԻՔ

Անշուք բընութիւն հայրենի երկրի,
Դու սիրելի՞ ես հէզ սըստիս համար.
Բայց կար ժամանակ—ես դեռ պատանի—
Ինձ գըրաւում էր օտար մի աշխարհ:

Եւ վառ անուրջներ աչքիս շարունակ
Նըկարում էին փայլուն պատկերներ—
Երկնային կամար վըջիտ, կապուտակ,
Հըսկայ լեռների սուր-սուր գագաթներ...

Եւ միջօրէի շողով ոսկեվառ՝
Թըլուում էր, թէ ինձ սօսիք, ձիթենիք
Կոչում են դէպի ստուերներ զովարար,
Եւ ինձ ողջունում վարդերը լըոիկ...

Եւ անխոհ մըտքիս, դեռ այդ օրերին
Ծանօթ չէր կեանքի նըպատակ, կոչում.. .
Ես դեռ անձնատուր մեղկ պատրանքներին,
Լոկ վայելք էի կեանքից պահանջում:

Բայց արագ, անշետ անցան այդ օրեր.
Ինձ վիշտն այցելեց անսպասելի՛.
Եւ շատ բան, ինչին խորթ էի ես դեռ,
Ցանկարծ իմ սըրտին եղաւ սիրելի:

Եւ թողի այլևս երազել օտար
Հեռաւոր աշխարհն հրմայի՛ սիրուն.
Ես տեսայ՝ նանիր աչքին աննշմար,
Եւ հայրենիքումն շատ գեղեցկութիւն:

Ակօսած դաշտեր, ոսկեհամակ արտեր,
Վըսեմ ծաւալումն տափաստանների,
Թաքուն շըրշիւնով թաւուտ անտառներ,
Եւ յորդ հեղեղներ գարնան գետերի:

Անշուք գիւղերի անդրր սըրբազան,
Ուր չարքաշ կեանքի ծանըր բեռի տակ՝
Սուրբ ազատութեան մի նորոգ օլուան
Ազօթքն է անում շինական մըշակ.. .

Տիսայ, հասկացայ—և սըրտիս այնքան
Մըտերիմ թըրւաց երգն հայրենիքի.
Սիրեցի՛ անշար և խինդ, և խրախճան,
Եւ խորին վիշտը հարազատ երգի:

Հայրենիք, թող դու չունենաս թովչանք
Օտարի աչքում: Բայց ով քեզ նըման,
Եւ ինքն է ձընշուած՝ երազել լըս կեանք—
Դու նրա համար թանկ ես, աննըման...

ԱՌ, ԻՆՉՊԵՍ ՅԱՃԱԽ...

Ուխ, ինչպէս յաճախ աչքիս յանդիման
Կանգնում է պատկերդ զիշերով լսորիկ—
Թանկագին պատկեր՝ ժըպառվ կուսական,
Եւ այնքան խոհուն, այնքան գեղեցիկ:
Եւ ողջագուրող, և փաղաքշալից
Տեսնում եմ նորից քո վառ հայեցուած.
Վաղուց է, վաղուց—քո շող-աշերից
Ցաւագար սիրալս կեանք չէ ըղգացած:
Բայց զուր եմ դեպի քո լոյս-ուրուական
Ես պաղաաանքով պարզում իմ ձեռքիր,
Զուր եմ աղերսում: «Կաց, ով սիրական,
Կուրծքըս մաշեցին անձկութեան վէրքեր»...
Լուռ հեռանում է քո զեղուն պատկերն,
Եւ ես մեն-մենակ մընում եմ նորից
Անձուկներիս հետ... Եւ միայն զիշերն
Դաժան նայում է իմ լուսամուտից...

Օ՛, ԿԱՐ ԺԱՄԱՆԱԿ...

„Въ надеждѣ славы и добра,
Гляжу впередъ я безъ боязни,...
Пушкинъ

Օ՛, կար ժամանակ—հայրենի աշխարհ
Մարտի էր կոչում իր զաւակներին
Ասոխների դէմ անբաւ, անհամար.
Եւ ոտքի ելած զօրքեր խրոխտագին,
Փողեր հընչելով զուարթ ընթանում;
Մահ էին տալիս և մահ ըստանում:

Բայց լսուց զէնքի ձայն-շառաչն ուժգին.
Եւ պաշտպանելով երկիրն հարազատ՝
Աղջը շնուշ քաշեց, ոյժ առաւ հողին.
Եւ այդ մարտից էլ նա ելաւ ազատ,
Ելաւ յաղթ ու քաջ, ինչպէս անցեալում
Ցաղթող էր եղած նա շատ կոիւներում:

Եւ ահա դարձեան իր զաւակներին
Յամառ կըռուի է կօջում հայրենիք.
Բայց սա նըման չէ էլ այն կոխներին.
Դիմագրել կեղծին, հալածել չարիք,
Յաղթել խաւարը—ահա մեր այժմեան
Նոր մարտը՝ յանուն սուրբ Շշմարտութեան:

Բայց չէ ահաւոր և նոր թրշնամին,
Նրան էլ կընկճէ հայրենի աշխարհ.
Նայեցէք, արդէն ցանկալին արփին
Շողում է չորս կողմ, նօսրանում խաւար.
Եւ ահ ու դողով ողին չարութեան
Զգում է անկորմն է իր իշխանութեան...

ՇԻՐԻՄ

Խըշշում էին աշնան խոնաւ գիշերին
Տերեւները լալագին,
Երբ մի դադաղ շերիմ դըրին մենաւոր,
Լուսնի շողով լուսաւոր:

Անսուդ, անլաց, լուռ ցանելով հող կըքան,
Թողին ամենին, հեռացան.
Լոկ լուսինն էր տըխուր շողած իր շողեր՝
Նայում շերմին ողջ գիշեր...

Ո՞Չ ԸՆԿԵՐՆԵ՛Ր...

Ո՞չ ընկերնե՛ր, դուք մի՛ ասէք, որ իզուր,
Որ անպառուղ կըռռուի համար ձեղ երկինք
Պարզեել է այդքան փայլուն ու մաքուր
Սուրբ ձգտումներ—սիրել վաստակ ու քըրտինք:

Ո՞չ մի՛ ասէք—կեանքի ծանրը խաչի տակ
Մեր իդձերը, մեր յօյսերը կը հանգնեն.
Եւ ամեն ինչ—գործ, հըրապեյր, նրպատակ,
Անհետ, անձայն անապատում կը կորչեն:

Ի՞նչու է ձեղ այդպէս յուղում, վըրդովում
Դառըն կասկած... Յառաջ, յառաջ համարձակ.
Դուք, սիրելիք, նրանցից չէք, ում կըրծքում
Եռւա է մարում հըրապեյրի սուրբ կըրակ:

Թող մեր սըրտերն միշտ աառապին, միշտ տոկան,
Կեանքի կըռվում չըզգան ոչ ահ, ոչ կասկած.
Միայն կըռուով ծանրը բովից փորձութեան
Նրանք կելնեն յըստակ, շողոն, ամրացած:

Ո՞ւ, պահեցէք, փայփայեցէք ձեր սըրտի
Անբիծ, փայլուն անուրջները սըրբազան,
Եւ նրանց մէջ ջերմ, կենսաշունչ հաւատի
Պայծառ հուկը թող չըմարէ յաւիտեան:

ՅԻՇԻՐ, ՀՈՂԱԾԻՆ...

Յիշեր, հողածին, որ պարագ կայ վըրադ՝
Օգնելու նրան, ով մերկ ու աղքատ,
Հոգսի բեռան տակ՝ շըրջում է ցաւոտ,
Աչքին արտասուք, օդնութեան կարօտ...
Յիշեր, որ Աստուած և՛ նրան, քեզ պէս,
Ստեղծել է ազատ, շնորհել միապէս
Սուրբիրաւունքներ—ապրել երջանիկ,
Ճաշակել կեանքի վայելք ու բարիք:

Յիշեր և այն քաջ, ազնիւ, անձնուեր
Նահատակներին, որոնք անվեհեր
Յառաջ են կոչել անուռ ամբոխին,
Դափնու տեղ՝ փրշեայ պըսակներ գրլիին:
Թող խեղճ եղայրներդ գըտնեն ապաստան
Խաղաղ յարկի տակ հիւրասէր քո տան.
Եւ ազատ վըշաից, հեռու փոթորկից,
Քաղեն սիրոյ խօսք—եղբօր շըթունքից...

ԱՄՊԵՐ

Դաշտում պառկած՝ նայում էի դէպի վեր,
Խնչպէս ամպերն լողում էին երկնքում.
Մեղմ հովեկն էր շցում սօսի տերեւներ,
Եւ սստերը թեթե դէպի ինձ թեքում:

Սահում էին շարուկ ամպերն իմ վերե,
Սահում, հալչում ու ըքանում հեռուներ.
Եւ լի խանդով մերթ սքօղում վառ արե,
Որ մայր-երկրին նա ըքաշխէ իր շողեր:

Կարծես, ամպերն ասում էին արեին.
«Շողուն շողեր մի՛ պարզեիր դու երկրին.
Քո ջերմ շընչով քո լցո սիրով դադարի՛ր
Փայփայելու, փաղաքշելու մայր-երկիր:

«Այնտեղ, ուր լուռ տարածում է իր թևեր
իրիկնամնւան, ու մարում են քո շողեր,—
Այնտեղ անվերջ զործվում է սև չարութիւն,
Այնտեղ անվերջ թափվում արցունք ու արիւն:

«Միթէ երկիրն արժանի՞ է դրդուանքիդ,
Կամ այն մեղսոտն քեզ սիրմում է ճըշմարիտ.
Ո՛, մեղ միայն, դու մեզ սիրի՞լ ու լցո տօւր,
Միայն մենք ենք և՛ անարատ, և՛ մաքուր:»

Եւ ամպերը թըռչում էին, սրլանում
Անեղը հեռուն— երկնի վըրայ կապուտակ.
Եւ իրարու յետքից հալչում, ըքանում...
Ասես, նրանց չե՛ր էլ իրղջում արեգակ:

Նա չեր ուղում աւպերի սառն ու ամբիծ
Մաքրութիւնը սիրած երկրի հետ փոխել.
Եւ ըսկսեց ջերմ շողերով բարձունքից
Դարձեալ մեղսոտ մայր-երկիրը համբուրել ...

ՆՍՏԵՄ ԱՅՍՏԵԴ, ՀԱՆԳՍՏԱՆԱՄ...

Նստեմ այստեղ, հանդստանամ—
Անտառի եղբում.
Ահա յարդով ծածկուած շարուկ
Խըթիթներ հեռվում:
Եւ վերն ամպեր, մութ ամպեր են
Իրալ յետեից,
Վազում հեռուն, օտար վայրեր—
Հայրենի երկրից:
Ահա կեչե ձերմակ ծառեր,
Վըտիտ բարդիներ,
Խորեր, ձորեր, արտ ու արօտ—
Տըխոնը պատկերներ...
Եւ չես կարող անցնել մօտից,
Որ խոր միաք չանես—
Ի՞նչն է արդեօք գէպի նրանց
Անզուսպ քաշում քեզ:

Հօ կան ուրիշ շատ աշխարհներ՝
 Փըստած ամեն տեղ
 Ուր և արեն է վառվուն,
 Կեանքն էլ լցու-շըքեղ.
 Բայց այնտեղ էլ կապոյտ ծովը
 Շուքով փայլելս,
 Մեր սիրան էլի խոր անձկում է,
 Սնձկում ու լալիս,
 Որ չետեսնում ոչ հայրենի
 Լայնդ ուսիներ,
 Ու այս անշնոք, մութ խրճիթներ,
 Որպէս մութ ամպեր.
 Ի՞նչ կայ արդեօք սրանցում այնքան
 Սըստին սիրելի,
 Ի՞նչ գաղտնի ոյժ այնքան թովիչ
 Եւ անմեջնելի... .

ՄԱՆԿԱԿԱՆ ՀԱՍՏԱԿԻ ՀԱՄԱՐ

1

ԳԵՏԻ ԱՓԻՆ

(ՊԱՏԿԵՐ)

Գետի ափին կողին տընակ,
 Լուսամուտներում
 Լցու է շողում ու շող-ցովեր
 Փըստամ ջըբերում:

Ջըկնորսին ին այդ տընակում
 Մընում անհամբեր.
 Որսից պիտի երկու օրէն
 Տուն գար. չըկայ դեռ:

Երեք օր է անյել արդէն
Քուն - համոզիստ կորցրած՝
Պապ, երեխայք ըսպասում են,
Աչքը ջուր կըտրած:

Իսկ ձըկնորսի կընկայ սըրտում
Սև սուդ ու սարսափ.
Մութն է հոգին, զիշերուայ պէս,
Դէմքը — գունաթափ:

Եւ նըստում են ամենքն հայի,
Կընկանն էլ կանչում;
Բայց «փորձանքի» հոգսն է խեղճին
Մաշում ու տանջում:

Ահա յանկարծ ձայն է գալիս —
Տընչում մի զել երգ,
Եւ նաւակ է գետի խորքից
Մահում դէպ եզերք:

Երեխաներն հէնց որ ծանօթ
Երդը լըսեցին,
Իսկոյն տընից դուրս թափուեցան,
Առաջ վազեցին:

Մայրը թողեց ձախարակը,
Ուրախ վեր թըռւաւ.
Պապն էլ վազեց — ի՞նչ աեղեց էր —
Ոտքը ոյժ առաւ:

Մանուկների ձէն - ծըփոցը
Երգն է խըլացնում;
Ջուր է նրանց պապը սաստում —
Ումբ ես սուս կացնում:

Ահա և նա — ողջ ու առողջ
Ծիծաղն երեսին,
Սկսում է ձի՛դ պատմութիւն
Իր որսի մասին:

Օ, ի՞նչքան նա ձուկ է բըռնել—
Ուռկանն է լի՞ փ-լի՞ք.
Լըսում են տղերքն հօր պատմածը՝
Լարած լըսելիք:

Պապն է նայում գելաձուկին—
«Ուշ, մե՛ծ է որբան».
Մայրը որդու ձեռքն է խոթում
Ճանարը կենդան:

Սուս նըստել է պըզտիկ աղջիկն
Ուռկանի կողքին
Ու սիրտը զող՝ ջուխտ կարմրախէտ
Բըռնել ջուխտ ձեռքին:

Յատկոտում են երեխաներն,
Ուրախ փըրթկացնում;
Երբ անհանգիստ ձուկն է յանկարծ
Զեռքից դուրս պըրծնում:

Մանկանց ծիծաղն դետի ամին
Հընչում էր երկար.
Նրանց նայում, հիանում էր
Լուսնեակը պայծառ:

Շողում էին փաղաքշալի
Երկնում վառ աստղեր,
Ու խոստանում մանուկներին
Ուրախ երաղներ:

ԾԱՂԻԿ

Ուրախ փըթթում են ծաղիկներ գաշտում,
 Գիշերը նրանց թարմ ցօղ է պատում.
 Իսկ արշալուսին —պայծառ, անուշիկ
 Ժըպտում են նրանց արեն ու երկինք.
 Եւ զեփիւռն անոյշ, թիթեռն ու մեղուն
 Ծաղիկների հետ զըրոյց են անում.
 Եւ դաշտն հայրենի ազատ, ընդարձակ
 Շնչում է նրանց նոր ոյժ ու նոր կեանք:
 Բայց ահա նրանք տեսնում են հեռվում,
 Խուլ խաւար բանտի նեղ պատուհանում
 Մեղմ օրօրվում է մի դալուկ ծաղիկ
 Տըխուր, մեն - մենակ, ասես, խեղճ որբիկ.
 Եւ խոր ցաւում են ազատ ծաղիկներ
 Ու ձայն են տալիս. — «Սիրելի՝ ընկեր,
 Ե՞կ այստեղ. ի՞նչ ես այդ պաղ խաւարում
 Որպէս խեղճ գերի, մաշվում ու մարում:»

—Ոչ ոչ ընկերներ, ոչ իմ սիրելիք,
 Պատասխանում է նրանց որբ ծաղիկ. —
 Թէպէտ դուք այդտեղ, ազատ երկնի տակ,
 Գարնան շընչով էք արբենում անյագ,
 Բայց չեմ նախանձում ես ձեր վիճակին,
 Զեմ թողնիլ երբէք այս բանալ մըթին.
 Ծաղկեցէք զուարթ, ձեր չքնաղ փայլով
 Խընդացրէք սըրտեր անհոգ, անխըռով. . .
 Ես պիտի ծաղկեմ բախտաղուրկ, անձար,
 Դառն արցունք թափող թըշուառի համար.
 Ես նրան պիտի ժըպտամ, ընկերներ,
 Ում սըրտում վառ է հայրենիքի սէր.
 Ես սփոփանք եմ այս խաւար բանտում
 Հէք բանաարկեալի, որ լցո է խընդրում:
 Թող ինձ նայելով՝ նա միտքը բերի
 Ծաղկուն հովիտներն հայրենի երկրի... .

ՏԱՏ ԵՒ ԹՈՌՆԻԿ

Փոքրիկ սենհակում, լուսամուտի մօտ
Պառաւը նստել՝ գուլպա է դործում.
Աչքերին խոշոր ակնոցներ զըռած,
Մի աչքն անդադար անկիւնն է զըցում:

Եյնտեղ, անկիւնում, դանդուր մագերով
Մի սիրուն արզայ՝ պատին թինկ
Կանգնել է լըռիկ, մըտահոգ դէմքով.
Հայեացքը, կարծես, մի բանի յառած:

«Ի՞նչ ես, թռոնիկըս, դու տանը նստել,
Չես վազում պարտէզ աշխատում մարդում,
Կամ թէ չես կանչում փոքրիկ քոյրիկիդ,
Նրա հետ մէկտեղ ձիախաղ սարդում:

«Ա՛խ, երանի՛ թէ իմ ցյժն էլ պատէր—
Չեզ ընկեր դառած, սիրուն դառնուկներ,
Կերթայի փոքրիկ այն մարդագետին.
Երկար չեն տեի այսպէս տաք - օրեր:

«Ճես, արօան արդէն գեղնում է դաշտում,
Գետին են թափվում դալուկ տերեւներ.
Շուտով ճըլվըլան թռչնիկներ մեղնից
Կերթան, կը չուեն հեռու աշխարհներ:

«Ի՞նչ ես, այ որդի, ձեռքերլդ ծալել
Սռևսուփուս կանգնել չես շալմվում տեղից.
Մի տես, ի՞նչպէս է արել փայլում,
Արել ժըպտում անամպ երկնքից:

«Չորս կողմը խաղաղ. չի շարժում քամին
Ո՞չ մի հատ խոտիկ, ո՞չ մի հատ ծաղեկ.
Ճես, հա, էլ էգուց չես աեսնիլ հոգիս,
Այսպէս եղանակ— այսքան գեղեցիկ»

Մօտ վաղեց իսկոյն թռոնիկը կայտուաւն
Ու պինդ սեղմելով տատիկի կըրծքին
Իր գանգուր զբլուխն, խորամանկ կերպով
Աշերը յառեց պառաւի դէմքին:

«Հը, ի՞նչ է, սիրալդ ընծայ է ուղում—
Տանձ, խընձոր, ընկոյզ կամ քաղցրաւենի՞ք.
Է՛, լաւ, զնա՛, առ դօլարի միջից:
— «Ո՛չ ես ընծաներ չեմ ուղում, տատիկ»:

«Բայց առանց է՞ն չէ, փորացաւ ունես,
Չը լինի՞ մի վատ, չար բան ես արել.
Դուցէ, ի՞նքը ես, իմ քընած ժամին,
Դօլարից մի բան գողնովի տարել»...

— «Ո՛չ ո՛չ, տատի՛ ջան, չար բան չեմ արած.
Միայն քո միտն է, ինձ համբուրելիս
Երէկ ասացիր.— «Խելօք որ կենաս,
Ի՞նչ սիրալդ ուղի, է՞ն կառնեմ, հոգի՛ս»

«Ա՛չ, չարածըթի՛, չե՞ս էլ մոռայել
Ասա՛, ի՞նչ առնեմ—բըզզա՞ն թէ ձիակ,
Անազից շինած փոքրիկ ամաննե՞ր,
Թէ՞ փայտէ օղակ կամ փոցիս ու թիակ»:

— «Ո՛չ ո՛չ չեմ ուղում... Այդպէս ընծաներ,
Ինձ պարզեել ես շատ ու շատ անգամ.
Հիմա էլ բաշխի՛ր դու ինձ պայուսակ,
Ու թողլ այ տատի, վարժատուն ման գամ»:

«Օհօ, քաջ տըղաս դըպրոց է ուղում,
Կարդալ ու գըրել—մի նայէ՞ք սըրան.
Լաւ կանես, դու գաս, հեքիաթըս լըսես,
Քո խելքի բան չէ դեռ այբնարան»:

— «Ես առանց էն էլ նստած քո կողքին,
Շատ-շատ եմ լըսել քո հեքիաթներից.
Հիմի էլ տատիկ, պատմի՛ր, թէ զիտես,
Է՞ն, ինչ որ ի ոկ է, եղած բաներից»:

Երէկ վարժատան մօտիցն անցնելիս,
Որքան տղայ տեսայ այնտեղ, Տէ՛ր - Աստուած.
Ուսուցչի պատմածն ես էլ լըսեցի,
Լուսամուտի մօտ ուշադիր կանգնած:

Լըսեցի, ա տառ, թէ ի՞նչ աշխարհներ
Կան ծովից գէ՞նը, մեզանից հեռի՞.
Ի՞նչ-ի՞նչ քաղաքներ և ի՞նչ անտառներ,
Ուր գաղաններ են ապրում ամեցի:

Պատմում էր—ի՞նչ տեղ չոգեր են խեղդուկ,
Ի՞նչ տեղ—յաւիտեան ձիւն, սառնամանիք,
Ի՞նչից է լինում թուխու, անձրե, կարկուտ,
Ի՞նչից—որոտմունք, կայծակ, փոթորիկ:

Պատմում էր էլի, թէ մեզնից առաջ
Ի՞նչպէս են մարդիկ օր ու կեանք վարել
Ի՞նչպէս Արարչին չը ճանաչելով
Փայտ ու քարին են միշտ աղօթք արել:

Յետոյ ըսկսուեց նկարչութեան դաս,
Աչք չէի պոկում բոլոր ժամանակ.
Մէկն աչք էր քաշում, մէկէլը—բերան,
Մէկը—ձի՛ ու կով, մէկէլը—տընակ:

Երբ գասը պըրծաւ, արդերք իրմբովին
Երգիլ ըսկսան: Դառնալով և ինձ
Վարժապետն ասաց. «Եկ, երգի՛ր մեզ հետ».
Առաւ, ներս քաշեց հէ՞նց լուսամուտից:

Տատի, ջան տատի, թող դըպրոց զընամ:
Ա'խ, ի՞նչպէս կուշտ-կուշտ քեզ կը համբուրեմ,
Թէ թողնես—և ի՞նչ նախշուն պատկերներ
Կը քաշեմ ու քեզ ընծայ կը բերեմ»)

Եւ իր վառվըռոռն աչերը տըղան
Տատի երեսին անհամբեր յառեց,
Ու քընքոյշ ձերմակ, ժիր թաթիկներով
Պառաւի կընձռռտ վըզովը փարեց:

Պառաւի աչքին շողաց արաասուք.
«Երեխ, Տէրն է այդպէս կամենում:
Է՛հ, թող քո սըրտի ուղածը լինի,
Գիտեմ, ուսմունքն է, որ լոյս է բերում:

«Թընա վարժառուն, միայն տե՛ս, զաւակ,
Գոռող մաքերով գլուխըդ չը լրցնես,
Ուսում որ առար—անուսումներից
Արհամարանքով երես չը դարձնես»

Վեր թշրուտ տըղան—ու քիչ էր մընում,
Որ նստած տեղից խըղճուկ պառաւին
Գետին զըլորէ. նա ակնթարթում
Դուրս պըրծաւ տընից ու վազեց այգին

Եւ ահա արդէն սիրուն կանաչում
Վըխտում է ուսման ծարաւի մանուկ.
Իսկ պառաւ տատը մերթ ծիծաղում է
Ու մերթ աչքերից սըրբում արտասուք...

4.

ԳԱՐՆԱՆ ԵՐԳ

Հալչում է ձիւնը, վազում է առուն,
Ժըպտում է արդէն գարունը պայծառ.
Շուտով կը երդէն սոխակներ սիրուն,
Եւ թաւ կանաչով կը պըճնուի անտառ:

Անամազ է, անդորր երկինք կապուտակ,
Անցել է ձըմրան ահեղ դըմնութիւն.
Եւ գեղուն գարնան արևն անուշակ
Ցօղում է երկրին լոյս ու ջերմութիւն:

Եւ սիրտն է այնպէս բաբախում ուժգին,
Ասես, մի բանի ըսպասում անյագ,
Ասես, քեզ բախտն է շըսում խընդազին,
Ժըպտում մօտահաս ծաղկալի՛ վեճակ:

Կեանք ու բերկրանք է ամեն տեղ տիրում,
«Դարձն» ես կարգում ամենքի դէմքին.
Եւ նա է ողջից առաւել բերկրում:
Ով համբերել է անլուր տանջանքին...

Բայց կայտառ մանկանց խընդալց ձայներ,
Եւ թըռչնիկների տաղերն ըզգայուն
Ինձ պարզ ասում են, թէ ով առաւել
Սիրում է նոր կեանք և ազատ գարուն...

5

ՊԱՊ ԵՒ ԹՈՒ

Մութ խըրճիթում պապը նըստած՝
Հին ուռիանն է նորոգում:
Հիւանդ թոռը կողքին պառկած՝
Խուլ շնչում է ու տընքում:

«Ա!ի, վերջ չըկայ այս անձրեխն,
Երբ կըգայ տաք եղանակ»,
Մեղմ հարցնում է թոռը պապին.
— Շուտով, շուտով, իմ զաւակ:

«Երբ կը շողայ ոսկի արև,
Դաշտը կանաչ կը պատի,
Կը կանաչն ծառն ու տերեւ.»
— Շուտով, շուտով, այ որդի:

«Շուտով՝ արդեօք, առաջուայ պէս,
Լըզի ափին, կարթ ձեռիս,
Սօսի ստուերում կը նստեմ ես.»
—Շուտով՝ շուտով՝ սիրելի՞ս:

«Բայց, ախ, էլ երբ... Պապի՛, դու ինձ
Այն էլ ասիր, որ կը դայ
Մայրըս շուտով՝ լցու-երկնքից,
Բայց ուր է նա—դեռ չըկայ:»

Եւ խեղճ մանուկն անբաւական՝
Լըռեց... իսկ ծեր, լուռ պապին.
Հին ուռկանը փըռեց ծընկան,
Ու լուռ կացաւ իր բանին:

Եւ ծերուկի խորշոմներով
Հանդարտ հոսեց արտասուք.
Թռոնիկն իսկոյն սուր աչերով
Տեսաւ պապի լացն ու սուգ...

Եւ խեղճ մանկան ձայնն աւելի
Հընչեց նուաղ ու արխրուն.
«Է՛հ, չեմ տեսնիլ ես, երեկ,
Ոչ մայրիկիս, ոչ գալուն.»

ԼՐԱԳՐԵՐԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԻՑ ՅԵՏՈՅ

Մըռայլվում եմ, երբ կարդում եմ ևս այն էջերն արնալից,
Ուր ոգեվառ մեղ պատմում են խռովութիւններ աշխարհիւ.
Ո՞րքան ծանր է տեսնել մարդիկ՝ վաղուց բաժան իրարից,
Դաժան դէմքով, անհաշտ հոգով մի՛ յարկի տակ ապրելես:

Ես սիրում եմ իմ հայրենիքն, սիրում խորին, չերմ սիրով,
Եւ ո՞ղջ հոգով նրան յաւերժ բախտ, արե եմ փափազում.
Բայց և օտար, խեղճ ազգերին ես չե՛մ նայում ատելով.
Թըշնամութիւնն ինձ օտար է—նա տեղ չունի իմ կըրծքում:

Ո՞չ դրուատներ աշեղ մարտի, ո՞չ արնաներկ Ճոխ դափնին
Հոգեզուարձ հիացմունքով չեն բորբոքում իմ արիւն.
Ես ջերմաջերմ աղօթքներով աղերսում եմ Բարձրեալին,
Որ երկնառաք սէրն հալածէ մագկանց սըրտից չարութիւն:

Աղօթում եմ որ տւերիչ դաժան օրերն յաւիտեան
Գընան կորչե՞ն—և մոռացած վըրէժ, նախանձ ու չարիք,
Բոլո՞ր ազգերն անշահ սիրով խոնարհ Փըրկչի վեհ ուսման
Եղբայրանան, կաղմեն ազատ, մի մեծազօր ընտանիք:

ԵՐԱԶ

(ՀԱՅՈՒԱՆ ԱՆԱՒԱՐՏ ՊՈԵՄԱՑԻՑ)

Վըշակց տանջուած, վըշտից յոդնած, մեն-մենակ՝
ես թեք ընկայ դալար, ստուերոտ սօսի տակ:

Լուսնի ցոլուն, վառ աղեղը վերեռւմ
Հանգարտ լողում ու շողում էր եթերում:

Լուռ էր իմ շուրջ... Միայն պայծառ, թափանցիկ
Երբեմն ժայռի կուրծքն էր շըյում սառն ալեք:

Եւ մըտախոհ լըսում էի ես ծովի
Լալկան ու խուլ մըռմըռոցը տաղտկալի:

Սակայն շուտով թըմրութիւնը ինձ պատեց.
Յոդնած աչքերս նինջը եկաւ ու փակեց...

Եւ ես յանկարծ տեսայ չըքնաղը լուսածին
Հեղ զիցուհուն—փայլեց աչքիս առաջին.

Այն զիցուհուն, որ սուրբ շընորհ պարգևել
Մարդկանց կամար մարգարէ էր ինձ ընարել:

Տեսայ՝ ճակտին պլսակ հիւսած մըրտենին,
Հուլի-գանգուլներ փրոռուած էին ուսերին:

Ոչերի մէջ սէ՛ր սըրբազան, սէ՛ր հըզօր—
Նա ջերմութիւն, լոյս էր ցօղում չորս բոլոր:

Եւ ես անշարժ, իս երկիւղած, երազում
Նրա վըսեմ խօսքին էի ըսպասում:

Եւ ահա նա կամաց թեքուեց ու ձիռքով
Թեթև շըփեց կուրծքը՝ լեցուն տանջանքով:

Եւ ես տեսայ—նուրբ շուրթերը, վերջապէս,
Մեղմ շարժուեցան ու խօսեցաւ նա այսպէս.

«Վիշտ ու յաւ է կուրծքըդ ձընշում՝ մարդարէ՛,
«Բայց քո ուղին դեռ շատ ու շատ երկար է...»

«Ասէմ, թէ քեզ ի՞նչ վիճակ է ըսպասում՝
«Քո ազգի մէջ—ոին, քարկոծանք ու յասում...»

«Կը քարկոծեն, թէ մեղսասէր, լըկտերես,
«Տընմարներին խիզախ խօսքով անարդես.

«Կը քարկոծեն, թէ աւետես դու յանկարծ
«Վրիժառութեան ահեղ ժամը այն մարդկանց,

«Որոնք կեանքում նանիր դործին անձնուէր,
«Միշտ խորհում են մեղկ ու նենդանք, չար դաւեր...»

«Որոնց սըրտելն, ասես, մեռած բընաւին,
«Անտարբեր են եղքօր լացին ու յաւին:

«Բայց մի՛ վախիր դու նրանցից: Քանի ես
«Քեզ ընկեր եմ—յառաջ գնա քաջի՛ պէս:

«Ես քեզ հմ թռիղ քեզ անվերջ քարկոծեն,
«Եյդ քարերը վլինիդ վըայով կը թռչն:

«Թէ քեզ տանջն շղթաներում կապկապած,
«Մի՛ վըհատիր, միշտ հաւատա, յուսով կաց,

«Որ շուտափոյթ քեզ կը հասնեմ օգնութեան
«Եւ իմ ձեռքով կը փըշտեմ քո շըդթան.

«Եւ դու նորից, իբրև աղատ առաքեալ,
«Կը քարողես: Քո ձայնն իդուր չե՛ թընդալ:

«Մարդկանց սիրաը սիրոյ սիրմ կը նետես խոր,
«Սերմը շուտով կը տայ պըտուղ փառաւոր.

«Այն, շուտով... Եյդ սուրբ օրը շուտ կը գայ,
«Տէ՛ մարդկութիւնն էլ չե՛ տանջուիլ չե՛ սըգայ.

«Նոր կեանք կառնէ համայն աշխարհ... Ահա, տե՛ս,
«Ճըշմարտութիւնն արդէն, պայծառ աստղի պէս,
179

«Փայլիըլում է մութ ամպերի յետեից
«Խեղձ աղգերին, որոնք չունեն կարեկից:

«Թառած, յառած... Եւ իմ կը քաջին դու շուտով
«Ճանգիստ կառնիս տանջուած հոգով ու սրտով:

Ասաց... Իսկոյն անյայտացաւ իմ աչքից,
Ես դողացի ու զարթեցայ իոր քընից.

Եւ նոր թափով կեանքը սիրել ուխտեցի,
Առաջուայ պէս ճըշմարտութիւն երգեցի:

Լըքեալ հոգիս վոթորկուեցաւ ու եռաց,
Եւ ես նորից սիրած քընարս ձեռք առած,

Բակսեցի զըժբախտներին աշխարհիս
Կարդալ սիրայ և փըրկութեան աւետիս...

ՑԱՆԿ



Կ Օ Լ ' Ց Ա Վ

ԵՐԵՑ

<i>Երգ</i>	9
<i>Շինականի մոածմունքը</i>	11
<i>Մերուկի երգը</i>	13
<i>Երգ</i>	15
<i>Խեղչի վիճակը</i>	17
<i>Երգ</i>	19
<i>Վերջին կոփւ</i>	23
ԽՈՀԵՐ	
1. <i>Մարդ</i>	24
2. <i>Կեանք</i>	26
<i>Խոճիթ</i>	28

ՆԵԿՐԱՍՈՎ

	ԵՐԵՄ
Երազ	39
Ների՛ր	40
Սիրուն հայրենիք	41
✓ Ժամանակակից ներբող	42 -
Օ՛, երգե՛ր, երգե՛ր	44
Երբ աղերսալի	45
Գիշեր է	47
Երանի՛ անչար այն բանաստեղծին	49
Մայլ	52
✓ Մուսա	53
Ծննդավայրում	57
Անձրևից առաջ	58
Գող	59
Անցնում են տարիք	60
Էլեգիա (հատուած)	61
Օ՛ր-օ՛ր-օ՛ր—օ՛ր-օ՛ր	63
Մերուկ	66
✓ Օրչներգ	67

	ԲԵՍԵ
Հիւանդանոցում	68
Անցնում են օրեր	75
Մերմնացաններին	76
Ականջ գրած	77
Խաղաղութիւն (հատուած)	78

ՆԻԿԻՑԻՆ

	ԵՐԵՄ
Խեղձութիւն	87
Աստղեր շողուն	89
Դժնաշունչ կեանքի	92
Մուրացկան	93
Ժառանգութիւն	95
Դանդաղ սահում են	97
Պօէտին	99
Մարմար	101
Ա՛խ, հանգիստ տուե՛ք	102
Զմեռնային գիշեր գիւղում	104
Բամբասանք	108
Աղի արտասուք	109
Երբ վերջալուսի	111
Փորուած է բահով	113
Գելժսեմանի պարտիզում	115

ՊԼԵՅՀԵՎ

	ԵՐԵՄ
Յառաջ	131
Անցան որոտ, գոռ փոթորիկ	134
Թռչնիկ	135
Ո՛չ, լաւ է կորչել	138
Պօէտին	139
Հայրենիք	141
Ա՛խ, ինչպէս յաճախ	144
Օ՛, կար ժամանակ	145
Շիրիմ	147
Ո՛չ, լնկերնե՛ր	148
Յիշե՛ր, հողածին	150
Ամպեր	151
Նստեմ այստեղ հանգստանամ	153
1 Գետի ափին	155

	ԵՐԵՎԱՆ
2. Մաղիկ	160
3. Տատ և թոռնիկ	162
4. Գարնան երգ	169
5. Պատ և թոռ	171
Լրագրերի ընթերցումից յետով	174
<u>Երազ</u> (հատուած անաւարատ պօէմալից)	176

ՀՀ Ազգային գրադարան



NL0319652

11628

891.71
8-34